




ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (187-188)

7-8 հուլիս-օգոստոս 2021

ԱՆԱՀԻՏ ՑԻՑԻԿՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐԱԾ
ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԵՐԵՎՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԶՈՒՄ

9



Երկու համերգ Տիգրան Չուխադյանի անվ.
երաժշտական դպրոցի սաների
մասնակցությամբ

Տ. Չուխադյանի անվ.
երաժշտական դպրոցի
վոկալ անսամբլ,
Ղեկավար՝ Լաուրա
Մամյան

2



Անցկացվեց Արամ Խաչատրյանի անվան 17-րդ
միջազգային մրցույթը դիրիժորություն
մասնագիտությամբ



Մրցույթի հաղթող ճանաչվեց Ճապոնացի դիրիժոր Դաիչի Դեգուչին

7

ՕՐԹԵՈՍԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԶՈՒՄ



Տեսարան Բ. Վ. Գյուլի «Օրթոս և Էվրիդիկե» օպերայից

5

ԵՊԿ 2020-2021 ԹԹ. ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ



ԵՊԿ 2020-2021 թթ. շրջանավարտներին դիպլոմների հանձնման արարողությունը

2

ԵՊԿ 2020-2021 ԹԹ. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ

1 Դուլիսի 22-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան հրաժեշտ տվեց ևս մեկ սերնդի: Կայացավ ԵՊԿ 2020-2021 թթ. շրջանավարտներին դիպլոմների հանձնման արարողությունը: Կատարումներով հանդես եկան ԵՊԿ ուսանողները: Մաղթում ենք բոլոր շրջանավարտներին բարի երթ և մեծ հաջողություններ թե՛ անձնական կյանքում, և թե՛ մասնագիտական ոլորտում: Հավատացած ենք, որ նրանք կոնսերվատորիայում ստացած գիտելիքներն ու հմտությունները կկիրառեն սերունդներ կրթելու և հայկական երաժշտական արվեստը տարածելու նվիրական գործում:

Խմբագրական



Մելինե Սարուխանյան, Լիլիթ Աբգարյան



Գառնիկ Եղիազարյան, Տիգրան Պետրոսյան



Ալեք Բաստաջյան, Արմենուհի Բազինյան (ԵՊԿ դոցենտ), Գառնիկ Եղիազարյան



ԵՊԿ 2020-2021 թթ. շրջանավարտներ

ԵՐԿՈՒ ԽԱՄԵՐԳ ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԱՆՎ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՐՈՍԻ ՍԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԿՈՒՅՐՅԱՄԲ

1 Դունիսի 16-ին Տիգրան Չոխաջյանի անվ. երաժշտական դպրոցի աշակերտների մասնակցությամբ տեղի ունեցան՝ դպրոցի հաշվետու համերգը Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, իսկ հունիսի 25-ին՝ Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի և Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան հոբելյաններին նվիրված համերգ, Ա. Բաբաջանյանի անվ. համերգասրահում: Համերգների ընթացքում հնչեցին Կոմիտասի, Խ. Ավետիսյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Ա. Բաբաջանյանի, Ս. Ռախմանինովի, Է. Բաղդասարյանի, Ռ. Պետրոսյանի, Ա. Այվազյանի, Մ. Դեմիրճյանի, Ծ. Հովհաննիսյանի, Գ. Ֆորեի, Յ. Բրամսի, Պ. Սարասատեի, Վ. Կորովիցինի, Ա. Պիացոլլայի, Ժ. Արբանի, Ռ. Բոտրիի ստեղծագործությունները: Կատարումներով հանդես եկան դպրոցի աշակերտներ՝ Ջուլիետա Եղիազարյանը (դաշնամուր, դասատու՝ Գայանե Թորոսյան), Մանե Խուրդյանը (դաշնամուր, դաս.՝ Լուիզա Պապայան), Աստղիկ Թադևոսյանը (ջութակ, դաս.՝ Մելանյա Մկրտչյան), Աննա Գրիգորյանը (դասական երգ, դաս.՝ Կարինե Միմոնյան), Ավետիս Բաղդասարյանը (սաքսոֆոն, դաս.՝ Էդուարդ Ներսիսյան), Վիկտորյա Սահակյանը (սլու, դաս.՝ Մելանյա Մկրտչյան), Վիկտորյա Պապիկյանը (ժողովրդական երգ, դաս.՝ Լուսինա Մամյան), Մանե Փոթուկյանը (քանոն, դաս.՝ Նարեկ Կազազյան), Սոնյա Ասլանյանը (դաշնամուր, դաս.՝ Լիլիթ Եղիազարյան), Ավարդ Մկրտչյանը (ուր, դաս.՝ Մարիամ Միրզոյան), Սամվել Առաքելյանը (կլարնետ, դաս.՝ Ռաֆայել Հակոբյան), Հայկ Մալխասյանը (սաքսոֆոն, դաս.՝ Էդուարդ Ներսիսյան), Պարզև Մկրտչյանը (թավջութակ, դաս.՝ Անահիտ Վարդանյան), քանոնի բաժնից՝ Անի Եզեկելյանը և Իլոնա Հովսեփյանը (դաս.՝ Աննա Մանասերյան), Միհրան Առաքելյանը (շեփոր, դաս.՝ Կոլյա Մարտիրոսյան), Լիլյա Քյուրբջյանը (դաշնամուր, դաս.՝ Սիրանուշ Երանոսյան), Լևոն Մինասյանը (դաշնամուր, դաս.՝ Նաիրա Վահանյան), Սեդա Գրիգորյանը (դաշնամուր, դաս.՝ Մարիամ Հովհաննիսյան), Համլետ Պետրոսյանը (դաշնամուր, դաս.՝ Ռուզաննա Չքյան) և Ռուզա Մինասյանը (դաշնամուր, դաս.՝ Նաիրա Վահանյան): Նվագակցեցին՝ պրոֆեսոր Անահիտ Ներսիսյանը, Կորյուն Փիլոսյանը, Գայանե Թորոսյանը, Քրիստինե Յավրյանը, Մարիամ Հովհաննիսյանը, Արտյուշ Երզնկյանը և Անահիտ Հակոբյանը: Ելույթներով հանդես եկան նաև դպրոցի երգչախումբը, խմբավար՝ Տատյանա Մինասյան, ժողովրդական նվագարանների անսամբլը, ղեկավար՝ Վահան Գասպարյան, փողային նվագախումբը, ղեկավար՝ Էդուարդ Ներսիսյան, լարային քառյակը, ղեկավար՝ Յուրա Եղյան, ինչպես նաև Կոմիտասի անվ. լարային քառյակը:



Տ. Չոխաջյանի անվ. երաժշտական դպրոցի երգչախումբ, խմբավար՝ Տատյանա Մինասյան



Թավջութակահարների քառյակ, ղեկավար Յուրիկ Յեղյան



Անսամբլի ղեկավար՝ Աննա Մանասերյան



Ժողովրդական գործիքների անսամբլ, ղեկավար՝ Վահան Գասպարյան



Կոմիտասի անվ. լարային քառյակ



Անսամբլի ղեկավար՝ Էդուարդ Ներսիսյան

В СЛУЖЕНИИ ИСКУССТВУ



Любите и изучайте великое искусство музыки: оно откроет вам целый мир высоких чувств, страстей, мыслей...

Вы увидите жизнь в новых тонах и красках.

Д. Д. Шостакович

6 июля 2021 года в большом зале Степанакертского музыкального колледжа им. Саят-Новы состоялся первый сольный концерт участника ансамбля «Аспет» Армии Обороны Республики Арцах Нарека Варданяна (баритон).

В зале присутствовали педагоги и студенты колледжа, а также приглашенные гости и поклонники классической музыки.

В исполнении Нарека Варданяна прозвучали произведения великих композиторов: Комитаса, А. Спендиарова, П. И. Чайковского, Ш. Гуно, Дж. Верди, И. Кальмана. В роли аккомпаниатора выступила Надежда Акопян – тонкая, безупречная пианистка, известная своим исполнительским мастерством не только на родине, но и далеко за пределами Армении. Когда-то, а точнее, в ноябре 2019 года на этой же сцене Нарека Варданяна выступил со своим соотечественником и сослуживцем, оперным певцом Ованесом Карапетя-

ном. Теперь же в концерте приняла участие студентка 4 курса вокального отделения музыкального колледжа, обаятельная и харизматичная Мария Давтян (класс Н. Фарамян), выступившая дуэтом с Нареком Варданяном. Зритель тепло и трепетно встретил музыкантов.

Нарека Ованесович Варданян родился 2 июля 1997 года в г. Чаренцаване. В родном городе мальчик учился вокалу в ДШИ им. Гарзу, затем после пятилетнего обучения продолжил учебу в ДМШ им. А.Хачатуряна. Окончив 12 классов общеобразовательной школы и минув музыкальное училище, Нарека Варданян поступает в Ереванскую государственную консерваторию им. Комитаса в класс заслуженного артиста Армении, профессора Геворга Акопяна. Умение держаться на сцене, общаться со зрительным залом, безупречный внешний вид, прекрасная дикция – таким Нарека Варданян предстал перед зрителем. Он как-будто невольно напомнил слова М.Бернеса: «Петя на эстраде надо не только голосом, но и, что, пожалуй, особенно важно – головой, сердцем и всем своим существом». В своих достижениях молодой исполнитель с благодарностью подчеркивает роль учителя – Геворга Акопяна.

По завершении бакалавриата, Н.Варданян призывается в ряды срочной службы Армии Обороны Армении. Уже будучи в Арцахе, музыкант становится участником музыкаль-

ного ансамбля «Аспет», периодически выступая и перед широкой публикой. В 2020 году, в последний год службы, Нарека Варданян вместе со своим батальоном участвовал в боевых действиях, осуществляемых на территории Арцаха.

Нарека Варданян – самый младший в семье Ованеса Варужановича и Арев Норайровны. Узнав, что Нарека был долгожданным сыном, ибо в семье до его появления уже подрастали три сестры, нам стало интересно, почему его назвали Нареком. И вот какую интересную историю поведал нам музыкант.

Как-то прадед Нарека, живущий в селе Солак, увидел во сне, что в его собственном дворе захоронен нарека. Поиски дали результат: в одной из стен двора было обнаружено старое издание святого писания. И тогда бабушка решила, что будущий сын их старшего сына Ованеса должен быть наречен Нареком.

Любимая ария Нарека Варданяна – ария Скарпиа из оперы Джакомо Пуччини «Тоска». Пожелаем молодому артисту исполнить эту арию на сценах всемирно известных оперных театров, умножив свой успех и принеся славу армянскому народу.

НИНА АКОПЯН
музыковед (НKP)

Վահագն Ստամբուլյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկո

Վամերային երաժշտության ազգային կենտրոնը, հուլիսի 4-ին ներկայացրեց «Lux Aeterna» համերգ՝ նվիրված հայ մեծանուն երգեհոնահար և հայկական երգեհոնային դպրոցի հիմնադիր, մանկավարժ, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայ Առաքելական եկեղեցու «Ար. Մեսրոպ Մաշտոց-Սահակ Պարթև» շքանշանակիր Վահագն Ստամբուլյանին:

Հանդես եկան երգեհոնահարներ՝ Վալերի Տոլստոլը (Շվեդարիա), Ժան-Պիեռ Ստայվերը (Նիդերլանդներ), Սոնա Պետրոսյանը, Թամար Բադալյանը (Գերմանիա), Նարինե Սիմոնյանը (Ֆրանսիա), Կարինե Հովհաննիսյանը, Մարի Սյուլերը (Ֆրանսիա), Լուսին Սառաջյանը, ինչպես նաև Տաթևիկ Մովսեսյանը (տալարնո), Թերեզա Նաչարյանը (ջութակ), Մերի Դոմագյանը (ալտ), Լևոն Առաքելյանը (թավջութակ), Նարեկ Ավագյանը (ֆլեյտա):

Վահագն Ստամբուլյանը մեծապես նպաստել է Հայաստանում երգեհոնային արվեստի տարածմանը: Նվագա-ցանկն ընդգրկում էր մինչդասական շրջանի, Յոհան Սեբաստիան Բախի, Հենդելի, նաև Քրիստափոր Բոլշևարյանի, Հարո Ստեփանյանի, Տիգրան Մանսուրյանի և այլոց երկերից: Ստամբուլյանը առաջին անգամ երգեհոնով կատարել է Ներսես Շնորհալու, Խաչատուր Տառնաջու, Գրիգոր Մազիսի «Պահլավունու» շարականները (Կոմիտասի ու Եկմայանի մշակմամբ և սեփական փոխադրմամբ): Կատարումներն աչքի են ընկել զուգահեռ հնչողությամբ, ոճական ճշգրիտ մեկնաբանումով: Համերգներով հանդես է եկել նաև արտասահմանում:

Առաջին անգամ 1965 թ. ապրիլի 24-25-ին Խորհրդային Հայաստանում Վահագն Ստամբուլյանը Լուսինե Զաքարյանի մասնակցությամբ հոգևոր երաժշտության համերգային ծրագրով հանդես է եկել Հայոց ցեղասպանության տարելի-



Վահագն Ստամբուլյան

ցին: Վահագն Ստամբուլյանի շնորհիվ հայ հոգևոր երգը տեղ է գտել բազմաթիվ եվրոպական երգեհոնահարների ծրագրային կատարումների ցանկում:

Ստամբուլով փայլուն կրթություն Սանկտ-Պետերբուրգի կոնսերվատորիայում, Իսայա Բրաուդոյի դասարանում, լինելով կայացած երաժիշտ-կատարող և ունենալով հնարավորություն շարունակել իր գործունեությունն այնտեղ՝ նա, այնուամենայնիվ, վերադարձավ Հայրենիք:

Այս հիմնեց երգեհոնային դպրոց Հայաստանում, կրթեց երգեհոնահարների մի քանի սերունդ. Ստամբուլյանի նախաձեռնությամբ Հայաստան բերվեցին բազմաթիվ երգեհոններ:



Այդ օրը հիշատակելու նպատակով են միացել աշխարհի տարբեր երկրներից հրաշալի երաժիշտներ, որոնց թվում են նաև Վահագն Ստամբուլյանի սաները: Միացել են հարգանքի և սիրո տուրքը մատուցելու մեծ մարդ, հայ, երաժիշտ, ուսուցիչ Վահագն Ստամբուլյանին:

Համերգին հնչեցին Բախի 18 լայացիայան խորալները՝ մի գլուխգործոց, որը շատ է կարևորել Վահագն Ստամբուլյանը և որը կենտրոնական տեղ է զբաղեցնում Բախի ժառանգության մեջ:

Նա անձամբ մեկ անգամ չէ, որ հանդես է եկել այդ հսկայական ծրագրով Հայաստանում և

Հայաստանից դուրս՝ կատարելով բոլոր 18 խորալները մեկ համերգում:

Համաճարակը, ցավոք, խնդիր դարձավ արտերկրի երաժիշտներին ուղղակիորեն ներկա լինելու: Սակայն մասնակցելու ցանկությունը մեծ էր: Այդ պաճառով որոշ կատարումներ ներկայացվեցին տեսագրությունների տեսքով, որ սիրով ձայնագրվել էին հատուկ այդ երեկոյի համար:

Խմբագրական

Հայաստանի պետական կամերային երգչախումբը բարձր մակարդակով ելույթ ունեցավ Ռավեննայի փառատոնի շրջանակում

Հայաստանի պետական կամերային երգչախումբը վերածննդի խտալացի մեծ բանաստեղծ և մտածող Ալիգիերի Դանթեի մահվան 700-ամյակի կապակցությամբ մասնակցեց Ռավեննայի փառատոնին՝ Քերուբինիի նվագախմբի հետ: Երգչախումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Ռոբերտ Մլեքյան) Ռավեննայում կայացած համերգի ընթացքում ղեկավարեց աշխարհահռչակ դիրիժոր Ռիկարդո Մուտին: Հնչեցին Յ. Հայդնի, Վ. Ա. Մոցարտի, Ֆ. Շոբերտի ստեղծագործությունները: Եվրոպական լավագույն փառատոնների շարքին դասվող Ռավեննայի փառատոնի հանդիսատեսը շատ քերթ ընդունեց հայկական երգչախմբին: Նշենք, որ Ռավեննայի փառատոնի կազմակերպիչները շատ տպավորված և հիացած էին երգչախմբով և համերգի մակարդակով: Իսկ մանստոր Ռիկարդո Մուտին շատ տպավորված էր Հայաստանի պետական կամերային երգչախմբի հետ աշխատանքից և առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել մանստոր Ռոբերտ Մլեքյանին: Մուտին նաև առաջիկա համագործակցությունների ակնկալիք ունի երգչախմբի հետ: Աշխարհահռչակ դիրիժորը երգչախմբի հետ զրույցներում առանձնահատուկ ընդգծել է հայերի և իտալացիների մտածողությունները: Հավելենք, որ Մուտին այս պահին ժամանում է Հայաստան երգչախմբի հետ՝ մույն համերգը կրկնելու հուլիսի 4-ին: Երեկոյի շրջանակում կկայանա Տիգրան Մանսուրյանի «Քավարան» ստեղծագործության համաշ-



Նորայր Նազարյան, Ռոբերտ Մլեքյան, Արմեն Արաբյան



Քերուբինիի նվագախումբ, Հայաստանի պետական կամերային երգչախումբ

խարհային պրեմիերան, որը գրվել է Ռավեննայի փառատոնի պատվերով՝ Դանթե Ալիգիերիի մահվան 700-ամյակի կապակցությամբ: Ռիկարդո Մուտին հավելեց, որ Տիգրան Մանսուրյանը մեր օրերի մեծագույն կոմպոզիտորներից է: Եվ ինքը շատ մեծ ուրախությամբ է ընտրել նրա գործերը՝

ղեկավարելու համերգին որպես դիրիժոր: Ի դեպ, շեշտենք նաև, որ նախագիծը կայացել է հենց Տիգրան Մանսուրյանի ջանքերով:

Խմբագրական

<https://www.aravot.am/2021/07/02/1202256/?fbclid=IwAR2qzYHvNanpupOCmlRjBlkq1icYAsQda5LvsLpLnNPsm8lksGuOLV5A>

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՊԿ ԳՅՈՒՄՐԻԻ ՄԱՍՆԱԿՅՈՒՂՈՒՄ

1

❖ Հուլիսի 15-ին Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում կայացավ «Հովեր» պետական կամերային երգչախմբի համերգը: Ինչպես սկզբում նշեց գեղարվեստական ղեկավար և ղիրի-

ժոր Սոնա Յովհաննիսյանը, սա «Հովեր»-ի երկրորդ համերգն էր Գյումրիում: Բացառիկ հետաքրքիր երգացանկում ընդգրկված էին Վերածնության դարաշրջանի հեղինակների՝ Կ. Ժանեկեն, Ջ. Գաբրիելի, մինչև Կոմիտաս, Ս. Զաքարյան, Ա. Ավանեսով, Գ. Սվիրիդով, Յ. Շանդեր, Ս. Ֆեյն, Մ. Օստրոփա:

❖ Հուլիսի 7-ին և 8-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում անցկացվեցին վարպետության դասեր, որոնք կազմակերպել էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Գյումրիի երաժշտական դպրոցների աշակերտների հետ համդիպեցին անվանի երաժիշտներ՝ Քրիստիան Էրբսլո-Փափազյանը (դաշնամուր, Ֆրանսիա), Սևակ Ավանեսյանը (թավջութակ, Բելգիա), Հրաչյա Ավանեսյանը (ջութակ, Բելգիա), Մայա Լևին (ջութակ, Բելգիա), Անդրեյ Գրիգորյանը (ալտ,

Ռուսաստան, Գերմանիայի Դաշնություն): Բացի վարպետության դասերից, նրանք պատանի երաժիշտներին նվիրաբերեցին լարային գործիքներ, որոնք հուլիսի 19-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում անցկացվելիք մրցույթի արդյունքում օգտագործման կտրվեն լավագույն կատարողներին: Աշխարհահռչակ երաժիշտները հանդես եկան մեկ համերգով՝ կատարելով Գ. Յենդելի, Ս. Պրոկոֆևի և Յ. Ֆրանկի ստեղծագործությունները:

❖ Հուլիսի 3-ին Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ստեղծագործություն բաժնի 1-ին կուրսի ուսանող Արշակ Մուրադյանի հեղինակային համերգը (դասախոս՝ Արամ Յովհաննիսյան): Հնչեցին վոկալ, կամերային ստեղծագործություններ՝ ուսանողներ՝ Ստելլա Նազարյանի, Տիգրան Կարապետյանի, Միքայել Պետրոսյանի, Հասմիկ Պոլեյանի, Հարություն Տերտերյանի, Լուսինե Ասատրյանի, Մարինե Խաչատրյանի կատարմամբ:



Արշակ Մուրադյան



«Հովեր» պետական կամերային երգչախումբ, խմբավար Սոնա Յովհաննիսյան



Հրաչյա Ավանեսյան, Քրիստիան Էրբսլո-Փափազյան, Մայա Լևին, Անդրեյ Գրիգորյան, Սևակ Ավանեսյան

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

1-ին կուրսի ուսանողներ՝ Մարիամ Դուկասյանին և Լիանա Գրիգորյանին, Լոնդոնում կայացած միջազգային մրցույթում Մեծ մրցանակի արժանանալու առթիվ:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դասախոս Դիանա Խաչատրյանը Սանկտ-Պետերբուրգում կայացած միջազգային մրցույթում արժանացել է Մեծ մրցանակի:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դասախոս՝ Բելլա Յովհաննիսյանին շնորհվել է դոցենտի կոչում:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ֆեյսբուքյան էջից, Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՊՈՅԱՆԸ



Քույր և եղբայր՝ Հասմիկ և Վարազդատ Մկրտչյաններ



ԿԱՐՈՏ

Եղբոր պես թանկ
Ոչ մի տեղ չկա,
Եղբոր պես անգին
Ոչ մի գանձ չկա:

Եղբոր պես ազնիվ
Աշխարհում չկա,
Եղբոր պես խղճող
Ու ընկեր սիրող,
Հարազատ դարձած
Ընկերներ չկան:

Միայն քեզ թողած
Ու դավաճանած,
Դատարանում կեղծ
Ցուցմունքներ տված:

Անսիրտ ու դահիճ
Չունեն ոչ մի խիղճ,
Քո ընկերներն
Ընկեր ձևացած:

Իմ զինվոր դարձած
Պատերազմ տեսած,
Պատերազմի մեջ
Մեռնակ մնացած:

Իմ հերոս դարձած
Դու շատ տանջանք,
Տառապանք տեսած,
Շուտով տուն կգաս
Դու հաղթանակած:

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՐԲ ԷԼ ՀԵՌԱՆԱՍ ԿՅԱՆՔԻՑ,
ԱՇԽԱՐՀԻՑ

Երբ էլ հեռանաս կյանքից, աշխարհից
Քո ամեն տարին մեկ օր կթվա
Պիտի կտրվես լավից ու վատից
Սին կյանքից միայն հուշեր կմնան:

Քո դարը կանցնի մեկ տարվա նման,
Երբեք չես գտնի ընկեր, հարազատ,
Եվ քեզ չեն հիշի հուր-հավիտյան
Նոր եկող մարդիկ օտարի նման:

Ոչ էլ կմնա հուշ-հիշատակ,
Այն աշխարհում էլ հանգիստ չես մնա,
Դանդաղ մի օր կանեն փլատակ,
Հավետ կդառնաս անհուշ մի գազաթ:

Այս աշխարհը ում էլ որ տաս,
Նրա ձեռքում դա չի մնա,
Եթե մարդը բարի չեղավ,
Նրա գործն էլ հալ չի մնա:
Թեկուզ կյանքում չարն է հաղթում,
Եվ բարին է մեռնում հավետ,
Հնուց խոսքն է, որ վատ մարդու
Գերեզմանին քար չի մնում:

Մանկությունից իմ երազած
Գազաթներն ո՞ր եմ, չկան,
Շատ եմ շրջել այս աշխարհում,
Ու գրույցներ շատ եմ լսել,
Ինձ գուրգուրող մորս քնքուշ
Լույս մատերն ո՞ր եմ չկան,
Մանկուց լսած իմ տատիկի
Հեքիաթները ո՞ր եմ չկան:

ԼԱՉԻՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՕՐՓԵՈՍԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻՎՅՈՒՄ

1

«Պետք էր իսկական խիզախություն և խորը համոզմունք, որ գեղեցիկը՝ գեղեցիկ է, որպեսզի չերկյուղել ունայն գլուխների կանխակալ կարծիքներից, հնապաշտների նախապաշարմունքներից, ովքեր տարբեր կողմերից ըմբոստանում էին այսքան խիզախ փորձի դեմ... Ավելին սահմանափակ միջոցներով պետք էր հասնել ճշգրիտ, ոգեշունչ, կենդանի կատարմանը...» Հեկտոր Բեռլիոզ. «Գյուլի «Օրփեոս»-ը Լիրիկական թատրոնում», 1862թ., Փարիզ

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի 100-ամյակին ընդառաջ Ղազարոս Սարյանի անվ. օպերային ստուդիան նվաճեց ամենահամարձակ ու առաջին հայացքից անիրականաճալի թվացող բարձունք. ուսումնական ու ժամանակակից կատարողական, ստեղծագործական ուժերով ներկայացվեց ամբողջական երաժշտաթատերական բեմադրություն, որը դարձավ մեր այսօրվա կյանքի մշակութային վճռական իրադարձությունը... Հեկտոր Բեռլիոզի բնորոշմամբ՝ «Օրփեոս և Էվրիդիկե» օպերան «թատերական մեծագույն երաժշտության հրաշք ու Գյուլի վեհ երկ» - ն է, որը 2021 թվականին առաջին անգամ բեմադրվեց Հայաստանում: Երևանյան պրեմիերան կայացավ հուլիսի 16, 17, 19 և 20-ին՝ Ղ. Սարյանի անվան օպերային ստուդիայի (գեղարվեստական ղեկավար՝ Հասմիկ Պապյան) և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) ստեղծագործական համագործակցությամբ: Հայաստան էին հրավիրվել դիրիժոր Սուրեն Շահիջանյանը (Ֆրանսիա), ռեժիսոր Վռամ Կարապետյանը (Ֆրանսիա), նկարիչ Տիգրան Զիթողյանը (ԱՄՆ), նախագծին միացել էր խորեոգրաֆ Արման Բալմանուկյանը: Պրեմիերայի չորս օրերի ընթացքում դիրիժորական երկու մեկնաբանումը, որը սկսվեց Էդուարդ Թոփչյանի մուտքով (առաջին և չորրորդ օրեր), ընթացավ Գյուլին ու մինչդասական բնորոշվող ժամանակին աստիճանաբար մոտենալու ուղով: Ե. Թոփչյանի մեկնաբանմամբ շեշտվում էին հոգեբանական դրամայի գծերը՝ առաջին պլան բերելով լեգենդի Էլեգիական ողբ ու նուրբ զսպվածությունը: Սուրեն Շահիջանյանի ղեկավարությամբ (երկրորդ և երրորդ օրեր) հնչում էր սյուժեի կենսական ջերմությունը, բաբախող ներվը: Թե գործիքային, թե վոկալ համարներում շեշտվում էին իրավիճակ-թեմաների շարժվող զգացմունքներն ու կրթերը. չէ որ լիբրետիստ Ռանիերի դե Կալցաբիջի հետ Գյուլին արիաներն անվանում էր արիագործողություններ: Ունկնդրի ուշադրությունը Ս. Շահիջանյանը բեռնում է օպերային մեծ ռեֆորմատորի երաժշտության անվերապելիտն առավել շատ մարմնավորող արտահայտչամիջոցի՝ ռիթմի վրա: Հեռացող բարոկկոյի և վաղ կլասիցիզմի այս գլուխգործոցը մի քանի դար ապշեցնում է իր հզոր ոճով ու միաժամանակ խստությամբ: Այն զուսպ, կենտրոնացած ողբ է, որտեղ հաղթում է մարդկային զգացմունքի ուժը, իսկ Երևանյան պրեմիերայում այդ ամենի երաժշտական բացառիկ խորհրդանիշը դարձավ երկրորդ գործողության ելիսյան դաշտերում հնչող՝ թախծող Էվրիդիկեի մտորումներն արտահայտող մեղեդի-մնջախաղի տեսարանը, այստեղ բալետային ու մենակատարային փոխափոխված մեկնաբանման մեջ չորս օրերում քառակի անգամ դափնեի սիրտը շուրջ բերեցին ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջին ֆլեյտահար Նարեկ Ավագյանի մենակատարումն ու պարող Օրփեոսի ու Էվրիդիկեի «երգող» աղաջոն:

Բարոկկո-կլասիցիզմի եզրագծին կանգնած հսկայի՝ Քրիստոֆ Վիլիբալդ Գյուլի օպերա-ոդբերգությունը կոնսերվատորիական բեմին ներկայացավ վիեննական, ֆրանսիական, *Ricordi*՝ հրատարակչության տարբերակների միասնությամբ՝ ստեղծելով ինքնատիպ՝ երևանյան խմբագրություն, մի քանի «հավելումով» (Լիլիթ Բլեյանի աշխատասիրությամբ հայալեզու թարգմանված լիբրետո-ուղեցույցում նշված է, որ բեմադրության համար ռեժիսորական լուծում է ստացել առաջին գործողությունում Օրփեոսի երգում սովերի ծնով Էվրիդիկեի մուտքը և Ամռեի երրորդ գործողությունում ներառված Գյուլի *Die Sommernacht* երգը): Ուսանող մեներգիչների, երգչախմբի ու բալետային տրուպայի երիտասարդները թարմության մոտա են հաղորդում ամբողջ ներկայացմանը, որտեղ միգուցե որոշիչ է ռեժիսորի՝ 23-ամյա Վռամ Կարապետյանի ջախել ու ջինջ խառնվածքի ներկայությունը: Վերջինս կարևորում է լուսավոր Օրփեոսի կորստից հետո խավարի մեջ խորտակված մտորումները՝ մարդկանց աշխարհի, դժոխք, դրախտ հանգրվաններով: Ռեժիսորը նշում է, որ սիրելի Էվրիդիկեին կորցնելուց հետո աստվածների սիրելի երգչի կյանքն ու հոգին մթնել է. նա չի տեսնում երկրային աշխարհը, Էվրիդիկեն տարել է իր լույսը... ու այդպես կլինի, մինչև կգա թուրքյան քաղցր պահը: Բ. Վ. Գյուլի «Օրփեոս»-ը մեծ ու շքեղ տեսարանների կոթող է, հետևաբար պահանջում է մեծ տարածություն, ձգտում է վեհ ու շքեղ տեսարանների, որտեղ այսօրվա տրամադրության մեջ լուծում է ստացել ներկայացման բեմակարգչական կողմը: Բեմադրության ղեկորատիվ ձևավորման գլխավոր արտահայտչաձևը երկհարկանի պոլիկարթոնատային կուլիսների ու հետմաքեմի կիրառմամբ ստացվող բեկված սիլուետ-սովերների պատկերային



Տեսարաններ Բ. Վ. Գյուլի «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայից

լայտմոտիվն է: Այն ամբողջ բեմադրության ընթացքում խիստ ու միաժամանակ եթերային մի կտավ էր հիշեցնում, որի վրա «շնչավորվում էին» Տիգրան Զիթողյանի հեղինակած տեսապատկերները: Տարիներ առաջ ժիր հրաշամանուկ նկարիչ ու այսօր սեփական, ճանաչելի ձեռագիր ունեցող արվեստագետ Զիթողյանի համար այս օպերան բեմակարգչական առաջին աշխատանքն էր, որտեղ ստեղծված էր տեսաշարային երկու առանցքային, հակադիր լուծում: Առաջինի դեպքում նա, ասես իր հուշերի, մանկության շրջանի նկարչական անցյալի մեջ է. պահպանվել են Հայրենիքի տաք գույները՝ մտաբերելով իր կյանքի վաղ ստեղծագործական շրջանի աշխատանքների գունային աշխարհը: Երկրորդում՝ այսօրվա Տիգրան Զիթողյանի վրձին հատուկ՝ սև-սպիտակի համադրությամբ լուծված պարողների իմպրովիզացիայի սավառնող տեսաշարն է, ի դեպ, կարող ենք նշել, որ գունային այդպիսի սեղմ, չափավոր լուծմամբ նկարիչն արձագանքում է երաժիշտ Գյուլի արվեստին հատուկ պարզ, բնական սկզբունքներին: «Օրփեոս և Էվրիդիկե»-ի բեմադրությունը սկսվում է Տիգրան Զիթողյանի ինքնատիպ կտավ-նախաբանով (ցանց-վարագույրի վրա պրոյեկտվում է առաջին տեսապատկերը)... Այն «հնչում» է տեսախցիկի վեր բարձրացող հայացքով, որի կենտրոնում

նկարչի աշխարհի համար առանցքային էակն է՝ կինը, այս դեպքում՝ երանելի Էվրիդիկեն, իսկ հաջորդաբար՝ երևում են խաղաղ ծովը, տաք ավազը, շարժում ստեղծող եղեգները՝ կերպավորելով գունային ու ֆակտուրային բնագիծ-պատկերներից կազմված մի կտավ: Նման սահմանանիշ է ուրվագծում նաև Գյուլի երաժշտությունը, որտեղ հանդիպում են ու միայն բարձր թռիչքից են երևում բարոկկո-ռոկոկո-կլասիցիզմ գեղարվեստական ժամանակների «իզմ»-երը: Տիգրան Զիթողյանի բեմակարգչական տեսապատկերի մյուս խմբի հերոսը Օրփեոսն է՝ չորս կուլիս-պատերին հայտնված իր մեկ կամ մի քանի սովերով բեմական մենապարին զուգահեռ դառնալով շարժման, թռիչքի ու անվերջ մտորումի վիզուալ զուգահեռ խորհրդանիշ, իսկ գեղարվեստական ու տեխնիկական առումներով ավելի բարձրացնելով ու արդիականացնելով անտիկ թեմայով ոդբերգական բալետի արտահայտչաձևը: Խորեոգրաֆ Արման Բալմանուկյանին ու իր գեղարվեստական ղեկավարությամբ գործող «Բալմանուկյան պարային նախագծի» արտիստներին տեսնելով, պետք է բարձրաձայնել՝ օրինվի այն պահը, երբ ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի վճռական առաջարկով մեծանուն երգչուհի ու եզակի հայուհի Հասմիկ Պապյանը համաձայնեց լինել Օպերային

6

ՕՐՓԵՈՍԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻՎՅՈՒՄ

5

ստուդիայի գեղարվեստական ղեկավարը, որը հրավիրեց կառավարիչ ու օպերայի երգիչ, այժմ արդեն օպերային ստուդիայի տնօրեն Յայկ Վարդանյանին: Նա էլ միանգամից նկատեց խորեոգրաֆիկ տրուպայի օժտվածությունը՝ փորձերի հարթակ տրամադրելով ապագա վերականգնվող բեմում և...ավելին՝ օրինակի այն ժամանակը, երբ 1774 թվականին ծագումով ավստրիացի՝ Ֆրանսիայի թագուհի Մարիա Անտուանետան իր հայրենակցին՝ Գյուլկին աջակցեց հասնել Փարիզ և հատուկ ֆրանսիական բեմի համար ծնվեցին «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայի նոր բալետային հատվածները՝ Ելիսեյան դաշտերում մենամկազ ֆլեյտայի մեղեդի-պանտոմիմը և մի քանի ծավալուն պարող համարներ, որոնց արտահայտիչ ուժն ու նրբագեղությունը «Բալմանուկյան պարային մախազիթ» փոխանցեց Երևանյան պրեմիերայի չորս օրերի ընթացքում՝ ավելի ու ավելի, օրեցօր: Բալետի արտիստները պարտիտուրն էին պատկերում, անեանում ու շատերին արցունքով թրջված ժպիտ բերում հենց հաղորդած խորեոգրաֆիկ ընթերցմամբ: Ինչպիսի նազելիությամբ են զգացել, լսել, բեմադրել հիանալի անտիկ պոեմն ու հանճարեղ Գյուլկի երաժշտությունը: Նրանց խորեոգրաֆիայի առանցքը վեհությունն է, որը սիրո իդեալ է, այն ամբողջությամբ երկնային գեղեցկություն է, քնքշություն: Բալետ-մնջախաղի յուրաքանչյուր դրվագը օդ ու տարածություն բորբոքեց, թևերը լայն բացած՝ բարձր թռիչք ու լայն թափ տվեց բեմադրությանն ու ամբողջ օպերային: «Օրփեոս և Էվրիդիկե»-ի երաժշտական ենթատեքստը լրացվեց հատկապես նրանց մասնակցությամբ բեմական իրադարձություններով՝ հաստատելով Ռոմեն Ռուլանի այն հանճարեղ գնահատականը, որ այստեղ երաժշտությունն անցավ գործողության: Օպերային ռեֆորմիստուր Գյուլկը թատերական երգչախմբի երգիչներից բարձր կատարողական պրոֆեսիոնալիզմ է պահանջում, իսկ «Օրփեոսում» ստիպում է երգչախմբին շարժվել, տարափոխվել՝ ստանալով ամենատարբեր կերպար-գույներ (սգացող մարդիկ, ուրվականներ ու ֆուրիաներ, Ելիսեյան դաշտերի երկնային հոգիներ, ցնծացող պալատականներ): Վռամ Կարապետյանի բեմադրությամբ դրամատիկական ամբողջականության համար երգչախումբը հնչում է բեմի ստեղծած բազմաստիճան տեսանելի ու ծածուկ հարթակներից, խմբերգային տեսարանների ցեղությունները հնարավորություն տվեց միացնել պարային բաղադրիչը (հատկապես՝ դժոխքի տեսարանում): Խմբավար Գյուլյանն Սահակյանի ղեկավարությամբ ներկայացած ԵՊԿ «Կոմիտաս» ուսումնական երգչախմբի մեկնաբանման մեջ կարևորում էին բազմաոճ խմբերգերի համայնապատկերի վեհ ու հանդիսավոր կերպարները, իսկ հոմոֆոն-հարմոնիկ, գլխավորապես ակորդային հյուսվածքի վրա կառուցված պարտիտուրում շատ համոզիչ էր գյուլյան խմբերգերին հատուկ ընդգծված խոշոր կանտիլենան: Երկրորդ գործողությունը օպերայի սիմֆոնիզացիայի՝ դժոխքի ու դրախտի հակադրությունն ու հաջորդականությունն է: Այն բալետային ու ռեֆորմական լուծումների կենտրոնն է: Եթե առաջին գործողությունում աստիճանակերպ «դեկորացիան» է, ապա երկրորդում այդպիսի ուրվականները ոչ միայն ծայրնով, այլ նաև պարով են դիմադրում Օրփեոսին. ու այստեղ նվազախումբը դիրիժորական խիստ անհատական մեկնաբանմամբ ստանում է զգացմունքի, էմոցիայի, դրվագի կոնկրետ ենթատեքստի ու պրեկլապիզմի ոճի նյարդը հաղորդելու հրաշալի հարթակ: Այստեղ է, որ խորեոգրաֆը լեգենդի գեղարվեստական չափազանց համոզիչ ընթերցմամբ նվազախումբը ամբողջությամբ ենթարկեցնում է օպե-



Տեսարաններ Բ. Վ. Գյուլկի «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայից



պարի տարբերվող ընթերցում-խառնվածքներ են: Յեղիկն հաջատրյանի Էվրիդիկեն կամային դիցուհու մեկնաբանում էր ստանում, հիշեցնելով ռոմանտիկական օպերաների կերպարներին ու ցույց տալով այն հաջորդականությունը, որ Գյուլկի օպերային արվեստից գնում է դեպի XIX դար: Օրփեոսի դերը Յեղիկն հաջատրյանն անձնավորում էր հաստատական արտաքինով, իսկ դետալներում՝ կենտրոնացումը գնում էր վոկալի վրա: Կարևոր է, որ ջերմություն, հուզում, շարժում հաղորդելու մեջ արտահայտումն ու ապրումը միավորվեց պարզության ջատագով Գյուլկի օպերայում: Լիլիթ Դավթյանի Էվրիդիկեի կերպարը լուսավո-

րային լիբրետտոյի դրամատուրգիական զարգացմանը: Պարը փոխակերպվում է մնջախաղի, որն էլ պարը դարձնում է բալետային թատրոն: Գյուլկի երաժշտությունը հնարավորություն է տալիս մենակատարներին արտահայտվել ճշմարիտ ժեստիկուլյացիայով ու միմիկայով: Յայտնի է, որ Գյուլկը հերոսներին մեկնաբանում է իբրև հզոր ներքին կամային լարումով համակված անհատներ, այլ ոչ արտաքին ժանրային ֆիգուրներ: Արդյունքում Օպերային ստուդիայի «Օրփեոս և Էվրիդիկե» ներկայացման երկու կազմի արտիստները դառնում են միևնույն կերպարի էմոցիոնալների երանգների մարմնացումներ, որոնք իրագործվում են տարբեր աստիճաններով՝ կախված մեներգի սեփական ներաշխարհի պարունակությունից: Յեկտոր Բեռլիոզը գրել է, որ Օրփեոսն այն դերերից է, որոնց մարմնավորումը չի ընդունում ոչ մի թերի, խղճով բան. «Կերպարը անձնավորելու համար անհրաժեշտ է երաժշտության խորը իմացություն, կանտիլենայի արվեստի յուրացում, պարզ ու խիստ ոճի լրիվ տիրապետում, ուժեղ ու ազնվաբարո ծայն, զգացմունքի խորություն, արտահայտիչ միմիկա, ժեստի գեղեցկություն ու բնականություն, վերջապես Գյուլկի երկի գերազանց ըմբռնում ու իմաստավորված սեր»: Այսպիսի համադրությունն ամբողջությամբ ընկալելի էր կոնսերվատորիայի շրջանավարտ ու հատուկ նախագծի համար հրավիրված մեներգուհի Սոֆյա Թունանյանի (Գերմանիա) Օրփեոսի կերպարում: Նրա համար Էվրիդիկեի կորուստը մարդկային ապրումի ճշմարտությունն ուներ, Սոֆյա-Օրփեոսը զուսպ, արքայական, տղամարդկային կեցվածք է որդեգրել և սկզբից սարսափեցնող, հետո՝ աստիճանաբար փափկող ֆուրիաների խմբերգի տեսարանում առավել զորեղ էր նրա հնազանդեցնող երգեցողությունը: Տիգրան Քախվեջյանի Օրփեոսի մեկնաբանման մեջ առանձնանում էին սիրտ պատռող աղաչանքները, իսկ թավիշ ծայնի ու արական արտաքինով կերպարի համադրությամբ ծնված բնականությամբ անշուշտ պետք է լրացվի մարմնով խոսելու հմտությունը: Յեղիկն հաջատրյանն ու Լիլիթ Դավթյանը Էվրիդիկե կեր-

րում էր բնությամբ պարզ և ստացած ունկնդրի սրտերը գերող արտաքին, արտիստական բնականությամբ: Էվրիդիկեն այս դեպքում ներդաշնակ էր Լիլիթ Դավթյան երգչուհու գողտրիկ խառնվածքին, բացի այդ, նա ամբողջությամբ փոխանցում էր ռեֆորմական լուծումները և թատերական գործողությունը ապրում էր դարձնում, որը հատկապես ցայտուն էր երրորդ գործողությունում: Ուսանող երգչուհին գտել էր Օրփեոսի հետ սրտով խոսելու արվեստը և զգացմունք ու ճշմարտություն էր դնում այնտեղ, որտեղ պերճախոսություն կար: Գեղեցկության կայսրությամբ ծառայող երկու Ամոռները՝ երգչուհիները Վարդուհի Թորոյանը և Սիրանուշ Օվսիյանը ներկայացան կերպարի երանգային ու խառնվածքային տարբեր մեկնաբանությամբ: Սիրանուշ Օվսիյանն իր Ամոռին տվեց խիզախ ու պինդ կեցվածք, իսկ Վարդուհի Թորոյանի դեպքում կերպարը հաղորդվում է սքանչելի ճշմարտությամբ: Ինչ տառաքել է գրել Բեռլիոզը, թե բավական չէ տիրապետել տաղանդ, որպեսզի ճշմարիտ արտահայտել Գյուլկի կանանց... այստեղ պետք է ունենալ բարձր հոգևոր հատկանիշներ, ինչպիսիք են սիրտ, ծայն, կերպար ու կեցվածք, որ առանց չափազանցելու ասել՝ այդ դերերը բացի գեղեցկությունից, պահանջում են...հանճարեղություն: Մասնագիտական ու մարդկային բացառիկ առաքինության մթնոլորտում ծնված այս բեմադրությունը Օպերային ստուդիայի նորագույն տարեգրության կարևոր մուտքն է, իսկ վարչական ու ստեղծագործական թիմն արդեն շարունակում է իր ճանապարհը դեպի նոր երաժշտաթատերական հանգրվաններ՝ սրտում ու սեպտեմբերի խաղացանկում պահելով Քրիստոֆ Վիլիբալդ Գյուլկի «Օրփեոս և Էվրիդիկե»-ն:

ՕԼՅԱ ՆՈՒՐԻՉԱՆՅԱՆ
երաժշտագետ, ԵՊԿ դոցենտ,
հասցեով՝ <https://www.aravot.am/2021/07/29/1206894/?fbclid=IwAR1ADna2OR4q2bpQwQJuAu2YPG5bQh3Nrgle6l5vXPpTKMfeJhKDPeuBpcg>

Կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանն արժանացել է մրցանակի Լյուքսեմբուրգում



Հասմիկ Հարությունյան

Կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանը Լյուքսեմբուրգում մասնակցելով «*International Best Competition*» միջազգային մրցույթին արժանացել է 1-ին մրցանակի (որպես լավագույն երգ), ներկայացնելով «Յիշողություն» ստեղծագործությունը տենորի և դաշնամուրի համար:

«*In-ternational Best Competition*»-ը հարգված համաշխարհային իրադարձություն է, որը նշվում է տարբեր ոլորտներում գերազանցության և նորարարության համդեպ իր անգուգական նվիրվածության համար: Յյուրընկալվելով Լյուքսեմբուրգի գեղատեսիլ քաղաքում՝ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում, այս մրցույթը հանդիսանում է տարբերակման փարոս և առաջնակարգ հարթակ՝ ցուցադրելու բացառիկ տաղանդներին ու բեկումնային ձեռքբերումները:

Հ. Հարությունյանի ստեղծագործությունն իր ինքնատի-

պությամբ արժանացել է հանձնախմբի բարձր գնահատականին:

Նշենք, որ կոմպոզիտորը բազմիցս մասնակցելով տարբեր միջազգային մրցույթների, արժանացել է բազմաթիվ մրցանակների: Ծավալելով ակտիվ մասնագիտական և մանկավարժական (դասավանդում է Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջում) գործունեություն, պարբերաբար տարբեր մրցույթներում հանդես է գալիս նաև որպես հանձնախմբի անդամ, արժանանալով պատվոգրերի և շնորհակալագրերի: Այդ առումով նշենք, որ այս տարի Էջմիածնի «Փոքրիկ քայլ» 2-րդ միջազգային երաժշտական մրցույթ-փառատոնի հանձնախմբի կազմում ընդգրկվելու և փառատոնի անցկացման գործում ունեցած մեծ ավանդի համար կոմպոզիտորին շնորհվել է վկայական: Լինել մրցույթի հանձնախմբի անդամ, և հանդես գալ տարբեր մրցույթներում որպես մասնակից. կոմպոզիտորի համար երկու դեպքն էլ պարտավորեցնող է: Հ. Հարությունյանի խոսքով. «Երբ հանդես եմ գալիս որպես հանձնախմբի անդամ, ինձ համար զգալի պատասխանատվություն է ծանաչել և գնահատել յուրաքանչյուր մասնակցի ստեղծագործությունը: Դրանում ինձ օգնում են ոչ միայն իմ մասնագիտական գիտելիքներն ու փորձը, այլ նաև արդար և անաչառ գնահատականներ տալու պարտականությունը: Ես կարծում եմ, որ դա մեծ պատասխանատվություն է՝ աջակցել այս ստեղծա-



գործական գործընթացին: Որպես տարբեր մրցույթների մասնակից ես անձամբ գիտեմ, թե որքան կարևոր է յուրաքանչյուր ոգեշնչող և խրախուսող խոսք, և ինչպես դա կարող է զգալիորեն ազդել ստեղծագործողի վստահության վրա, քանի որ յուրաքանչյուր գնահատող ունի յուրօրինակ դիտակետ և փորձառություն, որոնք կարող են բացահայտել նոր տեսանկյուններ իմ աշխատանքում»:

ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ
երաժշտագետ

Անկապվեց Արամ Խաչատրյանի անվան 17-րդ միջազգային մրցույթը դիրիժորություն մասնագիտությամբ

1

Ավանդույթի համաձայն՝ հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը՝ հունիսի 6-ին, կոմպոզիտորի անվ. համերգասրահում մեկնարկեց Խաչատրյանի անվ. մրցույթը, դիրիժորություն մասնագիտությամբ, որի պաշտոնական նվագախումբը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն է՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

«Արամ Խաչատրյան մրցույթ» մշակութային հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը հիշեցրեց, որ մրցույթն անցկացվում է «դաշնամուր», «ջութակ», «թավջութակ», «դիրիժորություն», «վոկալ» մասնագիտություններով: Մրցույթի ամբողջ պատմության ընթացքում երկրորդ անգամ այն անցկացվում է դիրիժորություն մասնագիտու-

յին կապերի գծով ղեկավար Դմիտրի Յաբլոնսկին, Լոնդոնի երաժշտության թագավորական քոլեջի պրոֆեսոր Փիթեր Սթարքը, դիրիժոր, Ջորմա Պանուկա դիրիժորության մրցույթի նախագահ ժորմա Պանուկան, IMG Artist ընկերության փոխնախագահ, թավջութակահար Հարոլդ Քլակսոնը, Մոսկվայի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Պավել Կոզանը: Նրանցից երկուսը մրցույթին մասնակցեցին հեռավար կարգով», - նշել է Մարտին Թովմասյանը:

«Այս մրցույթը առիթ է, որպեսզի մենք հավերժացնենք Խաչատրյանի նման անձին: Այս մրցույթը շատ մեծ նշանակություն ունի ամբողջ աշխարհի համար», - ասել է Հ. Չեքիջյանը:

Մասնորոգ Տիգրան Մանուկյանը, ով մրցույթի համար

շնորհվել Յունա Չոնին (Հարավային Կորեա)՝ մրցույթի երկրորդ փուլում Արամ Խաչատրյանի 2-րդ Սիմֆոնիայի լավագույն մեկնաբանության համար: Լեհաստանի Օլշտին քաղաքի Ֆելիքս Նովովեյսկու անվ. Վարմինո-Մազուրյան ֆիլիարմոնիկ նվագախմբի կողմից հատուկ մրցանակ է ստացել Ալեքսանդր Իրադյանը (Հայաստան/Գերմանիա), որը մրցանակակրին հնարավորություն կտա 2021-2022 համերգաշրջանի ընթացքում ղեկավարել սիմֆոնիկ համերգ սիմֆոնիկ նվագախմբի հետ Վարմինո-Մազուրյան ֆիլիարմոնիայի համերգային դահլիճում: «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում հաղթող է ճանաչվել Իեն Նիդերհոֆերը:

Դաիչի Դեգուչին մրցանակաբաշխությունից հետո նշել է, որ երջանիկ է հաղթանակի համար: Նա շնորհակալություն է հայտնել բոլորին՝ պրոֆեսիոնալ հանձնախմբին, իր արդեն ընկերներ դարձած մրցույթի մասնակիցներին, կազմակերպիչներին, նվագախմբին, որի երաժիշտները շատ բաներ են պատմել իրեն Արամ Խաչատրյանի մասին:

Դաիչի Դեգուչին ասել է, որ որպես երաժիշտ նվագախմբի կազմում կատարել է Խաչատրյանի «Գայանե» բալետը, սակայն որպես դիրիժոր առաջին անգամ է ներկայացնում Խաչատրյանական երաժշտությունը: Դեգուչին մրցույթի փակման գալա համերգի ընթացքում ներկայացրել է հատված Խաչատրյանի 2-րդ Սիմֆոնիայից: Ի դեպ, Խաչատրյանի տուն-թանգարանը հնարավորություն էր տվել առաջին մրցանակակրին փակման գալա համերգի ընթացքում հանդես գալ Խաչատրյանի դիրիժորական փայտիկով:

«Արամ Խաչատրյան-մրցույթ»

«Արամ Խաչատրյան-մրցույթ» մրցույթի հիմնադրամի գործադիր տնօրեն Մարտին Թովմասյանը նշել է. - «Պետք է գոհունակությամբ նշել, որ ստացվեց իրականացնել, չնայած բոլոր մարտահրավերներին: Դուք լավ գիտեք, որ աշխարհը դեռևս բաց չէ ամբողջությամբ, և այսքան մասնակիցներ հյուրընկալել Հայաստանում, հանձնախմբի նման պատկառելի կազմ հյուրընկալել Հայաստանում, նաև փորձել ներկայացնել Հայաստանը, Հայաստանի երաժիշտներին... Պետք է գոհունակությամբ նշել, որ մեզ հաջողվեց իրականացնել և հաջողությամբ ավարտին հասցնել Արամ Խաչատրյանի անվան 17-րդ միջազգային մրցույթը»:

Մրցութային միջազգային հանձնաժողովը փակ, գաղտնի քվեարկությամբ է որոշում հաղթողներին, իսկ հանձնաժողովի անաչառ զննատալաններով պայմանավորված է մրցույթի թե՛ հեղինակությունը միջազգային ասպարեզում, թե՛ այս 17 տարիների ընթացքում զրանցած հաջողությունը. - «Քանի որ WFIMC-ի անդամ ենք, ասեմ, որ մեկնարկեց WFIMC-ի՝ Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի տարեկան կոնֆերանսը, որին մենք առցանց ենք մասնակցում այս տարի՝ պայմանավորված նրանով, որ մեր մրցույթը ամփոփելու դեռ անելիք ունենք, բոլոր կանոնակարգերը, բոլոր չափորոշիչները պահպանված են: Եվ աշխարհին տվեցինք մոր անուններ, որոնք վստահաբար իրենց տեղը կունենան համաշխարհային երաժշտության ասպարեզում»:

Թովմասյանն ասաց, որ արդեն սկսել են նախապատրաստվել հաջորդ տարվա մրցույթին. - «Արդեն իսկ հայտարարել ենք, որ հաջորդ տարի թավջութակի մասնագիտության մեջ կկայանա մրցույթ: Այսօր մենք կամփոփենք արդեն մեր կատարած աշխատանքը, կհասկանանք մեր առավելությունները, ինչու ոչ՝ նաև բացթողումները որոշակի առումով, և առաջիկա ամսվա վերջում կսկսենք 2022 թվականի Խաչատրյանի անվ. միջազգային 18-րդ մրցույթի պլանավորման աշխատանքները»:

Խաչատրյանի անվ. միջազգային մրցույթը Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (World Federation of International Music Competitions) անդամ է, մրցույթի կազմակերպիչն է «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ իրականացվող Խաչատրյանի անվ. միջազգային մրցույթը նպատակ ունի բացահայտել տաղանդաշատ երիտասարդ երաժիշտներին, նրանց ընձեռել մասնագիտական առաջընթացի հնարավորություններ, ինչպես նաև մրցույթի միջոցով էլ ավելի հանրայնացնել Արամ Խաչատրյանի արվեստը:

Պատրաստե՛ք՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՑՆԱԼԸ
Նյութը քաղված է <https://www.azatutyun.am/a/>,
<https://www.panorama.am/am/news/2021/06/14/> և
<https://armenpress.am/arm/news/1054516.html>
կայքերից



Տիգրան Մանուկյան, Արմինե Գրիգորյան, 2-րդ մրցանակակիրը՝ Յուկուան Ջին



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Սմբատյան

թյամբ:

Մ. Թովմասյանի խոսքով. «Այս տարի մրցույթի հանդես է հետաքրքրությունը մեծ է: Կային մեծ թվով դիմորդներ. մինչև մայիսի 10-ը ընդունում էինք մրցույթի մասնակցության հայտերն աշխարհի գրեթե բոլոր երկրներից: Մայիսի 10-ից հետո ավարտվեց նախընտրական փուլը, որի ընթացքում դիմորդները ներկայացնում էին իրենց ծայնագրությունները և ինքնակենսագրականները: Կար նախընտրական հանձնախումբ, որը տարբերվում էր հանձնախմբի հիմնական կազմից, սակայն ևս միջազգային էր: Մայիսի 15-ին պաշտոնապես բոլոր հնարավոր խողովակներով հայտարարվեց ընտրված 20 մասնակցի անունը», - պատմեց մրցույթի գործադիր տնօրենն ու հավելեց, որ ի սկզբանե պետք է ընտրվեին 18 մասնակից, բայց դիմորդներն այնքան տաղանդավոր են, որ նախընտրական փուլը հաղթահարել է 20 անձ 15 երկրից:

Մ. Թովմասյանը ծանոթանալով մասնակիցների կենսագրական տվյալներին՝ արձանագրել էր, որ նրանցից շատերն արդեն իսկ լուրջ քայլեր են կատարել, հաջողություններ ունեցել. «Կային մասնակիցներ, որոնք աշխարհահռչակ դիրիժորների աշակերտներ են եղել, մասնակիցներից ոմանք էլ ղեկավարում են նվագախմբեր: Մրցույթին մասնակցում էին մինչև 36 տարեկան դիրիժորներ: Շատերին էր հետաքրքրում, թե ինչու է այդպես: Հիշեցրեցինք, որ մրցույթի հիմնական նպատակը մոր անուններ բացահայտելն է: Այս տարիքային շենք երաժշտի և ընդհանրապես մասնագետի կայացման, ինքնադրսևորման լավագույն շրջանն է: Նոր անուններ կբացահայտվեն, որոնք հնարավորություն կտան հանրահռչակել Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները և Հայաստանի անունը աշխարհի քարտեզի վրա ավելի տեսանելի ու մշտադիմ կդարձնեն»:

Նա տեղեկացրել էր, որ մրցույթին երկու հայ դիրիժոր էր մասնակցում, որոնցից մեկը ներկայացնում էր Ռուսաստանի Դաշնությունը, մյուսը Հայաստանի հետ զուգահեռաբար՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը:

Ծրագրում, ի թիվս այլ գործերի, ներառվել էին Սպարտակի և Ֆրիդայի Ադաջոն Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետից և Արամ Խաչատրյանի 2-րդ Սիմֆոնիան: Մասնակիցները հնարավորություն ունեցան կատարել նաև հայ ժամանակակից կոմպոզիտորներից մեկի ստեղծագործությունը:

«Մրցույթի հանձնախմբի նախագահն էր Հայաստանի ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Յուկուան Չեքիջյանը: Մրցույթի հանձնախմբի կազմում էին աշխարհում մեծ ճանաչում վայելող երաժիշտներ՝ Քյուլնի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Սիլվաիլ Յուրուսկին, թավջութակահար, դիրիժոր, Թել Ավիվի համալսարանի Բուխման-Մեթա երաժշտական դպրոցի միջազգա-

գրված հատուկ ստեղծագործության հեղինակն է, ընդգծեց, որ Արամ Խաչատրյանը գործիքային մտածողության գագաթն է. «Գործիքային երաժշտության բնագավառում այն, ինչ կատարվել է հետխաչատրյանական շրջանում, կարծում եմ, որ գրված բոլոր ստեղծագործություններն առնչվում են Խաչատրյանի կոմպոզիցիոն մտածողությանը: Իմ արածն ուղղակի համեմատ մասնակցություն է դրա զարգացմանը»:

Հարոլդ Քլարկսոնը շեշտել է, որ ինքն Արամ Խաչատրյանի հետ «ծանոթացել է» ուսանողական տարիներին. «Խաչատրյանի երաժշտական ժառանգության մասին խոսելիս պետք է առանձնահատուկ խոսել այն գործերի մասին, որոնք նա ստեղծել է նվագախմբի ու թավջութակի համար: Նման գործերը երաժշտական ժառանգությունում այդքան էլ չափ չեն»:

Ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի «Արամ Խաչատրյան» միջազգային մրցույթն անցկացվեց ոչ հեռավար կարգով, այլ միջազգային մրցութային բոլոր չափանիշներին ու ընթացակարգերին համաձայն, ինչն իհարկե բավական բարդ էր աշխարհում դեռ մոլեգնող համավարակի պատճառով:

Դիրիժորության մրցույթը կայացավ երկու փուլով: Բացման համերգից հետո յուրաքանչյուր օր ընթացքում փորձերը, իսկ երկրորդ՝ հիմնական լսումները: Հունիսի 12-ին մրցույթը եզրափակվեց գալա-համերգով ու մրցանակաբաշխությամբ:

Մրցույթի հաղթող ճանաչվեց ճապոնացի դիրիժոր Դաիչի Դեգուչին, երկրորդ մրցանակին արժանացավ չինացի դիրիժոր Յուկուան Ջինը, երրորդ մրցանակը շնորհվեց Միացյալ Նահանգներից ժամանած դիրիժոր Էլիաս Բրաունին:

Հարկ է նշել նաև, որ «Արամ Խաչատրյան» միջազգային մրցույթը Հայաստանում միակն է, որ հաղթողներին նաև ամենաբարձր դրամական պարգևատրումներն է ստիճանել՝ առաջին մրցանակակիրը, օրինակ, արժանանում է 10 հազար ամերիկյան դոլարին համարժեք դրամական պարգևի: Շնորհվում են նաև հատուկ մրցանակներ տարբեր անվանակարգերում, իսկ մրցույթի լավագույն մասնակիցներին հնարավորություն է տրվում համերգներով հանդես գալու Հայաստանում:

Մրցույթի առաջին փուլում կլասիցիզմի դարաշրջանի սիմֆոնիայի լավագույն մեկնաբանության համար մրցանակ է ստացել Իեն Նիդերհոֆերը, առաջին փուլում հայ ժամանակակից կոմպոզիտորի՝ Տիգրան Մանուկյանի ստեղծագործության լավագույն մեկնաբանման համար հատուկ մրցանակ է արժանացել Յուկուան Ջինը, Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բարեկամ Գագիկ Գաբրիելյանի անվ. հատուկ մրցանակ է ստացել Էկտորաս Տարտա-նիսը (Գերմանիա/Հունաստան)՝ մրցույթի առաջին փուլում Արամ Խաչատրյանի Սպարտակի և Ֆրիդայի ադաջոյի լավագույն մեկնաբանության համար:

Դիրիժոր Յուկուան Ջինի անվ. հատուկ մրցանակ է

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱԼՆԷ ԵՒ ՎԻՏ ՏԵՐՏԵՐԵԱԼՆԷ

Նվիրվում է Միեր Մկրտչյանի եվ Ավետ Տերտերյանի ծննդյան հոբելյաններին

Կ'երեւի ինչ որ զուգահեյպութիւն կայ, երբ ժողովուրդի մը ապրած ամենածանր օրերուն կը հանգչին իր ազգային արուեստի ամենավառ աստղերը:

1993 ղեկտեմբեր 28-ին աշխարհէն հեռացաւ դերասան Ահեր Մկրտչեանը, 1994 Ղեկտեմբեր 11 ին յօրինող Աւետ Տէրտէրեանը: Երկուքն ալ արժանացած էին Հայաստանի և մախկին Խորհրդային Միութեան բարձրագոյն կոչումներուն, երկուքին ալ շնորհուած էին արտասահմանեան պետութիւններու հեղինակաւոր մրցանակներ: Շատ տարբեր բնաւորութեան մարդիկ, տարբեր մասնագիտութիւններու տէր, տարբեր կեանք ապրած: Եթէ Մկրտչեան իր հանգիստը կը գտնէր միայն ինքնաթիռներու մէջ քաղաքէ քաղաք թատերախաղերու կամ նկարահանումներու առիթներով, Տէրտէրեան երեսուն տարիէ աւելի էր, որ կ'ապրէր մինակը, քաղաքէն հեռու ստեղծագործելով իր երաժշտութիւնը: Միւս կողմէ հարազատ հայ արուեստի մաքուր ծառայութեան մէջ, հարազատ ազնուութեամբ և ժամանակաւոր հոսանքներէ հեռու ըլլալուն մէջ, երկուքն ալ ըլլալով ճանչցուած ու զնահատուած օտարերկրեայ արուեստագետներուն կողմէ, կը ներկայացնէին հայ ազգային արուեստը երկրագունդի տարբեր տեղեր: Երկուքի մահին ալ եկաւ անսպասելի կերպով այն ժամանակ, երբ անոնք կը գտնուէին ստեղծագործական կեանքի զագաթներուն Ահեր Մկրտչեան Լոս Անճելըսի մէջ երբ կը պատրաստուէր մասնակցելու ֆրանսա-ամերիկեան հիւրախաղերուն, Աւետ Տէրտէրեանը Անգլիոյ է: Գերմանիոյ մէջ իր գործերուն կատարումն յետոյ, հազիւ քանի մը օր առաջ Ռուսաստանի Եկատերինպուրկ քաղաքի մէջ իր անունով փառատօնի սկսումէն:

Ստորև կը ներկայացնենք երկու արուեստագետներու վերջին հարցազրոյցներէն քաղուածքներ: Այսօր այս խօսքերը կ'ընկալուին որպէս դիմում, ուղղուած բոլոր արուեստագետներուն, բոլոր հայրենակիցներուն, գալիք սերունդներուն:

ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ

«Մեծ դերասան մը, մանաւանդ կատակերգակ մը, որ լեզուի սահմանափակումներէն անգին կ'անցնի: (...) Երբեք չեմ ունեցած առանձնաշնորհումը ներկայ գտնուելու կատարողութեան մը և ականատես ըլլալու բեմական վարպետութեան այնպիսի որակաւոր դերասանի մը, ինչպիսին է Միեր Մկրտչեանը:

Արդարեւ, հազուադէպ է տեսնել դերասան մը, որ երեք վայրկեան լուռ մնայ, նայուաքցը անշարժ յառէ կէտի մը և շարժէ մատները յուսահատ և կարեկից վիճակով, բայց ծիծաղներ խլէ: Ինչպէս Պեքէթ կ'ըսէ «Խաղաղերջ» թատերգութեան մէջ «ապերջանութեան նման ծիծաղելի ոչինչ կայ»: Կեանքը բեմ բարձրացնելով, հասարակութիւնը խընդուքի առաջնորդելը ամենէն որակաւոր տեսարանի մը վերապահուած է Պարգապէս ըսել, որ Միեր Մկրտչեանը մէկն է ապրող և անցեալի պաստառի մեծագոյն վաստակաւորներէն - ինչպիսիք էին Ֆերմանտէլ, Քանթինֆլաս և Ժաք Թաքի - կը նշանակէ անգիտանալ մարդ մը, որ հսկա դերասան մըն է: Երանի թէ Ամերիկայի մէջ Միեր Մկրտչեանի նման մեծ թիւով դերասաններ ըլլային և երանի թէ ամերիկացի դերասաններ դիտելն զինք բեմի վրայ: Թատրոնը հոս իր նմաններուն պէտք ուսի»:

Ամերիկացի բեմավար-դերասան-թատերագիր ՌԻՉԸՐՏ ՊԵՅԼԻ

Նկարահանուած է 50է աւելի ժապաւեններու մէջ, որմէ շատերը արդէն անցած են հայկական, և ոչ միայն հայկական դասական ֆիլմերու շարքին: 100է աւելին դեր մարմնափորած է թատրոնի մէջ միայն: 2000 անգամ բեմ բարձրացած է իր անմահ Պաղտասար Աղբարի կերպարով: Հիւրախաղեր ունեցած է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գանատայի, Լիբանանի, Սուրիոյ, Ֆրանսայի, Պուլկարիոյ, Աւստրիոյ, Չեքոսլովաքիոյ և այլ երկիրներու քաղաքներուն մէջ:

Իր ստեղծած ազգային կերպարը ճանաչում բերած է անոր ամբողջ աշխարհին մէջ:

Ել ինքը մնաց հայ ազգային թատրոնի պատմութեան և ժամանակակից շարժանկարի արուեստի մէջ, որպէս ամենապայծառ դերասանը:

«Ինծի համար իմ արուեստի մէջ չափազանց կարեւոր է իմ ստեղծած ազգային կերպարը: Ես երբեք չեմ դաւաճաներ իմ նախազգացումին, իսկ նախազգացումս ինձ կը թելադրէ խաղալ հայերէն: Ես կը կարծեմ, որ այդ է պատճառը, որ իմ ստեղծած կերպարը կը գրաւէ տարբեր երկիրներու բեմադրիչներու ուշադրութիւնը, հասկանալի է ոչ միայն հայ, այլ նաեւ օտարերկրեայ հանդիսատեսին... Ովքե՞ր են իմ հերոսները: Ի՞նչ ըսեմ անոնց մասին: Գրեթէ բոլոր կերպարներուն մէջ միտք մը կը հետապնդեմ, սեւեռուն գաղափար մը: Իմ արուեստը խօսք է մարդու մասին, բարի մարդու մասին, մարդ անհատի մասին, ան-հա-տա-կա-նու-թյան մասին...: Փոքր մարդիկ են կեանքին մէջ իմ հերոսները, բայց մեծ իրենց մարդկային անմիջականութեամբ, շիտակ, ազնիւ,



Միեր Մկրտչյան



Ավետ Տերտերյան

անխառն նկարագրով:

Ես շատ կը սիրեմ իմ աշխատանքը: Օր մը ինծի հարցուցին. Թատրոնէ աւելի ի՞նչ կը սիրէք: Հայրենիքս... թատրոնը ի՞նչ է Հայրենիքի դիմաց: Կը սիրեմ Հայաստանը, քաղաքներու միջեւ տարբերութիւն չեմ դնէր, այնքան քիչ մնացած են, ինչու՞ ըմտրեմ մէկը: Արտասահման շատ եղած են հիւրախաղերով ու բեմէն միշտ տեսած են հայուն, որ կարծես թէ կ'աղաչէր «ջանիդ մեռնիմ, խաղայ այնպէս, որ բոլորը հասկնան, որ մենք ազգ ենք»։ Տարիներ շարունակ ես չէի պատկերացներ, որ հայրենիքէն կարելի է մեկնիլ ապրելու համար ուրիշ երկրի մը մէջ կը համարէի այդ դաւաճանութիւն: Այսօր, կ'ափսոսամ, որ 35 տարեկանիս չեմ գացած: Ինչու՞... Համայնավարները կառուցած էին պետութիւն մը, որու համակարգը կատարեալ էր միջակներու համար... շատերը ցաւով կը յիշեն համակարգի անկումը, բայց ես կ'ափսոսամ, որ այդ տարիներու ընթացքին շատ բան կորսնցուցած են: Ֆիլմի մը մէջ կը խաղայի, ուրտեղէն ուր յայտնուեցաւ ամերիկացի մը, որ կ'ուզէր դնել ֆիլմը: Բնականաբար, ուր կար ամերիկացի, այնտեղ ալ կար Քա.ԽԵ.Պէի աշխատակից Ֆելիքս անունով: Ամերիկացին հաւնեցաւ իմ դերասանութիւնը և հետաքրքրուեցաւ թէ իմ աշխատանքի համար ինչքան կը ստանայի: Ես ստանալով օրը 16 ռուբլի մոյմիսկ աչքը չթարթելով, ըսի 100000: «Ինչ քիչ է», հիասթափուեցաւ ամերիկացին, հիասթափուած էր և Ֆելիքսը: «Դու ինչու՞ այդքան քիչ ըսիր»: Երեւի պիտի ըսեի «միլիոն»... Եւ հիմա հաշուեցէք քանի միլիոններ կորսնցուցած եմ...

Հանդերձեալ աշխարհի ճամբորդութիւն ունեցայ: Իմ տոմս ստամոքսիս խոցն էր: Ես հիմա գիտեմ ինչ բան է երջանկութիւնը... Բլիճիքական մահի ժամանակ ինչ բան որ մոթմոթացած են, յետոյ յիշեցի, «տոլար մը ամէն հայէն...»: ...Հայաստանը օգնութեան կարիք չուէի, որք չէ: Բայց ես կ'առաջարկեմ «թաքս» սահմանել բոլոր հայրենեան համար, ընդամենը մէկ տոլար ամսական չափով: Աշխարհին մէջ ինը միլիոն հայ կայ: Նոյնիսկ եթէ բոլորն ալ չտան տարեկան մօտ 100 միլիոն տոլար կը հաւաքուի... 1988ին, կը յիշեմ, ինչպիսի ոգեւորութեամբ կը գոռային ,Գործադուլ, գործադուլ. հիմայ մէկը չկայ, որ կանգնի Ազատութեան հրապարակին վրայ ու կոչ ընէ: «Աշխատի՛՛՛ք»: Յետոյ միւսը «Հայացէ՛ք»: Չեմ հասկնար ինչպէ՞ս ես պիտի «հայանամ», եթէ տարիներ շարունակ, տարբեր երկիրներու մէջ, իմ ստեղծած կերպարներով կը ծանցնային թէ ինչ կը նշանակէ հայը: Ես կը զարմանամ այն մտաւորականներու արարքներուն, որոնք կը բողոքեն, կուլան այս չկայ, այն չկայ, մեզ տիրութիւն ընող չկա...: Հայաստանի ամենածանր օրերուն, ես բացի նոր «Արթիստական» թատրոն...: Եւ գիտէք, ամենաբարձր զնահատականը ստացայ ատրպէյճանցի յայտնի դերասանէ մը, որ Մոսկուայի մէջ ըսած էր. «Ինծի այնչափ չեմ վախեցներ հայ մարտիկները, ինչքան Մկրտչեանը, որ շրջափակուած, ծանր օրեր ապրող Հայաստանի մէջ, ի հակառակ այսօրուայ արուեստի անկմանը, կը բանայ նոր թատրոն...»:

... Ես անկեղծ կը կարծեմ, որ քաղաքականութիւնը տաղանդաւոր մարդկանց մեծ արուեստ է: Ինչ կը վերաբերի մեր քաղաքական գործիչներէն շատերուն, հեռուստացոյցով ալ կ'երեւայ, այնչափ վատ դերասաններ են: Շատերը շատ արագ կը մոռնան, թէ երէկ ինչ եղած են և կրակամութեան մէջ ինչին պիտանի են: Անգամ մը Հնդկաստանի մէջ Ջայփուր քաղաքի մէջ որոշեցի հայկական եկեղեցի այցելել... Նստեցայ «ռիկչա»... Երեխան սկսաւ քշել, այդ ինչ տառապանք էր, կը նայիմ մէջքի ոսկորները այնպէս կը ցցուին, որ քիչ կը մնայ որ կաշին պատռուի: Չդիմացայ, կանգնեցուցի, գրկեցի, անոր նստեցուցի իմ տեղը, ես ալ խեցնելով վարորդիս դէկին, սկսաւ քշել ամբոխի, հեծանիւներու, մեքենաներու ժխորի միջով: Չէ կրնար պատկերացնել, թէ ինչ պատահեցաւ, երբ տեսան մեզ, խոխտուեցաւ ամէն ինչ լաւ հագնուած ուրեմն մեծահարուստ չաղ արտասուհմանցին կը տանի կիսամերկ, աղտոտ ռիկշային...: Սկիզբը երեխան վախէն կը դողար, կաղաչէր տեղս վերադառնամ: Կամաց-կամաց համակերպուեցաւ, յետոյ ըմտելացաւ այնչափ, որ գոռալով ցուցմունքներ կու տար: Երբ հասանք, միանգամէն սթափեցաւ, գիտակցեցաւ, որ միայն քանի մը վայրկեանով դարձաւ «սաիպ» և ամբողջ կեանքը պիտի պտտեցնէ հեծա-

միւի ոտնակները ու տխրեցաւ... Այսպէս կը պատահի ոչ միայն Հնդկաստանի մէջ և ոչ միայն ռիկշաներու հետ:

Ի հարկէ, իւրաքանչիւր մեծ հերթափոխ իր հետ կը բերէ մակարդակի անկում... Սակայն վերջնական փուլզում և աղէտ, ինչպէս շատերը կը կարծեն, չ'ըլլար: Հոգիին մէջ ծնածը անհետ չի կրնար կորչիլ: Միայն թէ մեր գլխին երկրորդ Աֆղանստան չկրկնուի:

Յանկարծ դուրս չգայ, որ այս ամբողջ արիւնն ու զոհերը իզուր էին, անտեղի: Հացի, վառելիքի, լոյսի, կազի, տաքութեան ու ապրուստի բացակայութիւնն այնքան սարսափելի չէ, որքան այդ ահաւոր զգացումը: Իհարկէ, եթէ ամէն ինչ բարեյաջող աւարտի, մենք հազարամեակներու խնդիր կը լուծենք, հակառակ պարագային... տեղին է Ֆուշէի իմաստուն խորհուրդը՝ «Մտքիդ եկածն իսկոյն մի արտայայտեր, քիչ մը սպասէ...»:

ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐԵԱՆ

«Տեղեկատուական թեքնիկան, Էլեկտրոնիքայի և համակարգիչներու մակարդակով անհրաժեշտ է փորձարկումներու, նորացնելու, երաժշտութիւնը ուսումնասիրելու և վերլուծելու համար: Ան կը բանայ նոր տարածութիւններ երաժշտական մտածողութեան, երեւակայութեան, ժամանակակից ստեղծագործութեան համար:

Մարդու ստեղծած թեքնիկան թոյլ կու տայ աւելի խորը ներխուժել անգիտակցելի տարածութիւններու մէջ, ուր հնարաւորութիւն կայ մեծ և տարրական հարցադրումներու, ուր անհանգստութիւնը, կասկածը և համոզումները մեր կողմէ չուսումնասիրուած կեանքի մէջ կը բացայայտուին երաժշտութեան նոր հնչողութեան մէջ, երաժշտութեան, որ ընդունակ է գիտակցելու անյայտը:

Աւետ Տէրտէրեանի վեցերորդ սինֆոնիային մէջ ես լսեցի նման զգացումներու աշխարհի համար անհանգստութեան ալիքները գիտակցուած նոր բանական ձեւերու մէջ: (...) Տէրտէրեանի մօտ ուժեղ երեւակայութեամբ հարուստ միտք է և բնական իր պահանջը նոր արտայայտչական միջոցներու... որոնք կ'աջակցին անոր հասնելու ազատ երաժշտութեան նոր հորիզոններուն»:

Իտալացի յօրինող ԼՈՒԻՃԻ ՆՈՆՕ

Հեղինակ է երկու «Կրակէ օղակ» և «Երկրաշարժ» օպերաներու, «Ռիչարտ III» պալէթի, 8 սինֆոնիաներու, ծայնային-գործիքային, սենեկային բազմաթիւ ստեղծագործութիւններու: Իր գործերը կատարուած են Ռուսիոյ, Գերմանիոյ, Հարաւսլավիոյ, Պուլկարիոյ, Լեհաստանի, Չեքոսլովակիոյ, Անգլիոյ, Ֆինլանտիոյ, Նորվեկիոյ մէջ: Իր վերջին տարիներու ստեղծագործութիւնները գրուած են Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, ԱՄՆի «Ֆիրմաներու» պատուէրներով:

Իր երաժշտութիւնով հիմնուած հայկական ասանդութիւններուն, ժողովրդական գործիքներու օգտագործման և ժամանակակից յառաջապահ մտածողութեան վրայ, ան կը պատկանի հայ և եւրոպացի 20րդ դարու վերջաւորութեան ամենավառ հեղինակներու շարքին:

«Ինչպե՞ս կը յօրինեմ երաժշտութիւնը դժուար թէ կարեւոր բացատրել: Իմ երաժշտութիւնը կու գայ իմ մօտ տիեզերքէն, Աստուծոյ կողմէ պատրաստ ծելով և ես միայն գրի կ'առնեմ զայն: Ինծի յաճախ կը հարցնեն, թէ ինչի՞ մասին են Ձեր սինֆոնիաները, և ես կը պատասխանեմ, որ ամէն ինչի մասին են... Արուեստը յիշեցնելու ուժ ունի, և երաժշտութիւնը կը յիշեցնէ մարդուն այն, ինչ որ ինք գիտէ աշխարհի մասին, հնչիւնները կ'արթնցնեն անոր մէջ իր ծինային, ցեղական յիշողութիւնը: Իմ երաժշտութեան կերպունը .ինչիւն է, մենաւոր հնչիւն: Ամէն ինչ կը սկսի ծայնէն և ամէն ինչ ուղղուած է դէպի «հնչիւնը»: Գիտէք, մեր կատարողները տուտուկ նուագելով կ'օգտագործեն «թեքնիքա», որ կը կոչուի «դամ», որ չընդհատուող հնչիւն է: Ինծի համար այդ ոչ թէ միայն «թեքնիքա» է, այլ փիլիսոփայութիւն, կապուած արեւելեան մարդու աշխարհի ընկալումին հետ... Հնչիւնը սկիզբն է եւ արեւելքի եւ արեւմուտքի... Ամէն մեղեդի միանշանակ է, իսկ հնչիւնը ամբողջական Ազգի, հայրենիքի ոգին չի կրնար տեղաւորուիլ կամ փոխարինուիլ ինչ որ ստեղծագործական հնարով, այդ ոգին ես կը լսեմ միայն անվերջանալի, անպաշտպան, բայց իզօր հնչիւնի մէջ:

Ես չեմ պատկերացներ իմ կեանքը, իմ ստեղծագործելը հայրենիքէն հեռու: Իսկական արուեստագէտը պիտի ապրի և մահանայ իր հողին վրայ: Այդ կապի խզումը կործանիչ է: Ապրելով օտարութեան մէջ, արուեստագէտը չի կրնար երբեք արտայայտել իր ժողովուրդի զգացումները և հոգեկան վիճակը: Ուրիշ բան, որ ստեղծուած իրավիճակին մէջ շատ ու շատ նպատակներ չեն իրագործուիր, եթէ ապագան մահ է եւ մահէն չեմ վախճար, պատրաստ եմ մահանալու... Սակայն այսօր ես չեմ կրնար մեղադրել այն մարդկանց, որոնք կ'երթան արտասահման, առաւել՝ ես խորհուրդ կու տամ երթալու... ինչպէս ըսաւ գործընկեր մը «Փրկելով ինծի, ես կը փրկեմ մշակոյթը...»: Եւ ճիշդ է,

ԱՆՎՈՐՈՅ ԶԻՑԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ՎԱՅԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՏՈՒՄ



Մամուկ Բարիկյան (Լոռուի կոնսերվատորիայի պրոֆեսոր), Անահիտ Ցիցիկյան, ժողբՖ Սիգեսի (հունգարացի ջութակահար, մանկավարժ), Չայկովսկու անվ. միջազգային 4-րդ մրցույթում, Մոսկվա, 1970 թ.



Լիլիթ Եփրեմյան



Աստուխ Վարդանյան

1 Ինձ համար մեծ պատիվ է ներկայացնել մի ամբողջ, որի դասախոսական կազմում ավելի քան չորս տասնամյակ եղել է Հայաստանի Վաստակավոր արտիստ Անահիտ Միխայլովնա Ցիցիկյանը։ Մեծ ջութակահար, միջազգային լավագույն ամուսնների կողքին հնչել մի անուն՝ ազատ ռոմանտիկ ոճի կատարող, ամեն նոտան հիմնավորող, չորս լարի վրա իր թանձր վրձնով-աղեղով գունեղ երաժշտական թատրոն կայացնող, բազմաշերտ ու հարուստ հնչողությամբ հյութեղ, համեղ, մտոտ (տերմինը ԵՊԿ պրոֆեսոր Մոկաչյանինն է) և, միևնույն ժամանակ՝ գրեթե եթերային, զեփյուռի պես թրթռող, երկինքն ասես ծակող-բացող, նոր բարձունքներ բացահայտող ծայրով, որը ճախրում է կատարյալ ազատության մեջ։ Արթուն ու ակտիվ մտքով, շատ կամային և միևնույն ժամանակ նրբագեղ կանացի երաժշտական կերպարներով։ Ինչ-որ թաքցված թախծով ու ցավով, որը երբեք զուտ անձնական չէ, այլ իր երկրի, իր Հայրենիքի, հարազատ ժողովրդի ծայրն է՝ գեղեցիկ, հասուն, հստակ, պահանջատեր։

Այսօր, երբ նշում ենք ԵՊԿ 100-ամյակը, նրա նվիրյալներից մեկի ծննդյան 95-ամյակը նոր իմաստ է ստանում՝ ասես անձնական ճակատագրի հորելյանները միաձուլված լինեն Կոնսերվատորիայի գոյության հետ, իրենց ժամանակ զգված հիմքերը մինչ օրս ամուր սյուներ են, որ պահում են մեր կրթությունն ու մշակույթը։

Ծնված լինելով Լեմինգրադում՝ 1926 թվականին, նա հենց այդ անկրկնելի միստիկ քաղաքում ստանում է նախնական երաժշտական կրթությունը՝ Գրիգորի Գինզբուրգի և Լ. Ցեյտլինի ղեկավարությամբ։ 14 տարեկանում Երևան փոխադրվելուց հետո սովորում է պրոֆեսոր Կարապետ Սավելյիչ Դոմբաևի ԵՊԿ դասարանում, Մոսկվայում ավարտում է ասպիրանտուրան՝ պրոֆեսոր Կոնստանտին Մոստրախի ղեկավարությամբ։ Ցիցիկյանը եղել է մեր՝ Կատարողական

արվեստի պատմության և տեսության ամբիոնի ստեղծման ակունքներում, ԵՊԿ-ում աշխատել է 1950 թվականից, 1969 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզը հայ լարային կատարողական արվեստի ասպարեզում, 1982 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում։

Ջարմանալի մարդկային տեսակն էր Անահիտ Ցիցիկյանը, նրա հիմնական և առաջնային բնորոշումն ինձ համար միակն է՝ հայրենասիրությունը։ Ողջ կյանքում մեկ ուղիղ ճանապարհով են ընթացել նրա ստեղծագործական որոնումները՝ Հայրենիքը փառաբանելու, վերածնելու, Հայաստանի դերը, նշանակությունը վերագտնելու ճանապարհով։ Ինչ էլ աներ, որ գործն էլ ձեռնարկեր, դա պիտի ծառայեցներ Հայրենիքին։ Այդպես սիրելով միայն հնարավոր էր հասկանալ Հայաստանի իրական դերն ու նշանակությունը աշխարհում՝ մի բան, որ մինչ օրս լիարժեք դեռ չենք գիտակցում։ Եվ նա արեց մի բան, որի համեմատությամբ անձամբ ինձ համար երկրորդական են նրա բազմաթիվ այլ ձեռքբերումները՝ լարային կատարողական արվեստի բնագավառում նա Հայաստանի անունից աշխարհի հետ խոսեց հավասարը հավասարի պես, և փաստեց ողջ գիտական աշխարհի առջև հայ գործիքային արվեստի ինքնուրույնությունը, զարգացման բարձր աստիճանը, որ գալիս էր Հնագույն դարերի արվեստից, Միջնադարյան երաժշտությունից՝ Նաբեկացու հանձարի լույսի ներքո և Հայկական Վերածննդի գաղափարից, որ Վազգեն Չալոյանից հետո նա մեծապես զարգացրեց երաժշտական ուղղվածությամբ։ Այս ամենը պիտի հիմնավորեր 1194 թվականի Արցախի խաչքարի պատկերով, Դվինում գտած X-XI դարերի սափորի փորագրությամբ, հայ մատյանների զարդանախշերով, համեմատության մեջ դնելով դրանք Կիևյան Ռուսիայում, Նորմանդիայում պեղած նույն ժամանակաշրջանի՝ հնագույն պատկերների հետ։ Ընդ որում, իր հետաքրքրությունների կենտրոնում են բոլոր հայ լարային նվագարանները՝ քամանչան, քամանին, սան-

թուրը, տավիղի հնագույն օրինակները և այլն։ Բաղդատելով նվագելու կերպը՝ քամանին, ջութը ուսին դնելու եվրոպական մոտեցումը, որը նաև հայկական էր և տարբերվում էր արևելյան՝ ոտքին հենելու ավանդույթից, նա առանձնացնում է հայկական ավանդական մշակույթը արևելյան միասնական ընտանիքից, ընդգծելով Հայաստանի հատուկ դերն ու նշանակությունը ոչ միայն մեր տարածաշրջանի կատարողական արվեստի հարցում, այլև եվրոպական կատարողական արվեստի համար։ Ընդ որում ոչ միայն կատարողական ասպարեզում, այլև գործիքների պատրաստման, լարերի հատուկ մշակման և պատրաստման հարցում, նշելով հայ վարպետների գործիքաստեղծման տեխնոլոգիաների նշանակությունը աշխարհահռչակ խտլացի վարպետների համար, որոնք, նաև օգտվելով և կատարելագործելով հայկական գյուտերը, ստեղծում էին լարային գործիքների եզակի ու անմահ օրինակներ։

Շփվելով Անահիտ Միխայլովնայի հետ, հաճախ անդրադառնում էի, թե որքան ցածրաձայն է նա խոսում՝ համարյա շշուկով, մանկական հիացմունքով, անվերջ զարմանալու կարողությամբ արդեն առաջացած տարիքում և դրա հետ մեկտեղ՝ որքան ամուր է նրա միտքը, որքան հիմնավոր, հաստատուն, փայլատակող, ինչ հետաքրքիր կապեր ու ասոցացիաներ էին գոյանում նրա խոսքում, որտեղից ուր էին հասնում։

Արդեն ոչ այնքան ամուր առողջություն ունենալով, նա ժամերով աշխատում էր, խորացած իր թղթերի մեջ, և մեծ հարգանք կար այդ ամենի նկատմամբ՝ տնեցիք աշխատում էին չխանգարել, չաղմկել։ Եվ հանկարծ նա, ավարտելով իր գործը, հայտնվում էր հյուրերի առջև իր համեղ կարկանդակներով, արդեն լրիվ ուրիշ՝ անուշ տատիկի կերպարանքով, ով ասես այդ տան պահապան իրեշտակն էր։ Բայց 5 լեզու իմացող, 27 երկրում անհաշվելի համերգներով հանդես եկած, իսկական գիտնականի

11

ՎԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱՆԷ ԵՒ ՂԵՏ ՏԵՐՏԵՐՆԵԱՆԷ ՆՎԻՐՎՈՒՄ ԵՍԻՆ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԵՎ ՂԵՏ ՏԵՐՏԵՐՆԵԱՆԻ ԾՆՆՈՂԱՆ ԽՈՐԵԼՅԱՆՆԵՐԻՆ

8 Եթե ինք կործանի մշակույթը ասկե ոչ մեկ բան կը չափի։ Ինք կ'ապրի Եւրոպայի մէջ, բայց կ'աշխատի իր մշակույթի օգտին, կը ստեղծէ իր ազգային արժեքները։ Այսօր հարցը պարզ բանի մը մէջ է արուեստագէտներու ֆիզիքական փրկութեան։ Անոնք արժանի են ատոր, թէկուզ միմչեւ հիմա իրենց արդէն ըրածին համար, իսկ եթէ չկարենան ստեղծագործել այնպէս ինչպէս Հայրենիքի մէջ անուանենք այդ ժամանակաւոր անկում։

Իմ կեանքս դիւրին չէր ընթանար։ Անընդհատ կը պայքարէի և առաջին հերթին այն «արուեստի ղեկավարներ»-ու հետ, որոնք կը համոզէին, որ իմ երաժշտութիւնը անհասկնալի է ժողովուրդին։ Բայց տարիներ անցան, վերաբերմունքը փոխուեցաւ, չեն գիտեր, կամ անոնք 70 տարուայ ընթացքին մեծցած են, կամ ես, պարզապէս, անոնց յաղթեցի...

Եթէ ինձի հարցնէին համաձայն եմ, որ փլի Խորհրդողային Միութիւնը, ես կը պատասխանէի «Այո...»։ Բայց արդեօք այսպէ՞ս պէտք էր փլել։ Առանց մտածելու, թէ ի՞նչ կ'ըլլայ յետոյ... Ստաւրականութիւնը աղքատութեան մէջ է... Եւ Աստուած չտայ, որ միւթական աղքատութիւնը վերափոխուի հոգեկանին...

Հայը միշտ ուժեղ է իր ոգիով։ Եթէ մենք կը կորսնցնենք մեր արուեստը, գիտութիւնը, կը կորսնցնենք ամէն ինչ։ Ի տարբերութիւն ուրիշներուն, մենք չենք կրնար փոխարինել զայն նաւթով, բամպակով կամ ոսկիով...

Կան արուեստագէտներ, որոնք այսօր չեն աշխատի

պատճառաբանելով Հայաստանի ծանր վիճակը, բայց անոնք չէին ստեղծագործեր ե՛լ առաջ ու չեն ալ աշխատիր նոյնիսկ դրախտի պայմաններուն մէջ։ Սակայն անոնք մեծ եռանդով կը մասնակցին ցոյցերուն և ձեռքերը թափ կու տան հրապարակներու վրայ։ Ես չեմ համարեր ինձի կողմնակի դիտորդ, կտրուած ժողովուրդի խնդիրներէն։ Բայց ես ազգային շարժումի մէջ ներդրումիս համար նախընտրած եմ ուրիշ ճանապարհ և այդ համընկաւ իմ երաժշտութեան Հայաստանէն դուրս հետաքրքիր կատարումներու հետ։ 1988-ին իմ վեցերորդ սինֆոնիան կատարուեցաւ Մոսկուայի «Մեծ Թատրոն»-ին մէջ. այս փաստը ինքնին եզակի է, քանի որ այս թատրոնի բեմի վրայ երբեք չէ կատարուած ոչ մէկ սինֆոնիա։ Եւ ռուս երգչախումբը կ'երգէր հայ այբուբենի գիրերը։ Կեղծ հայրենասէրները կրնան մեղադրել ինձի ինքնագովեստի մէջ։ Բայց այդ ինձի համար միեւնոյն է. այսօր ես կ'ապրիմ գիւղի մը մէջ, մաքուր հողի մարդկանց մէջ և անհասանելի եմ իրենց համար։

Ստաւրականներուն յաճախ կը մեղադրեն, որ անոնք ցոյց չեն տար մեր յայտնուած փակուղիէն դուրս գալու ճանապարհները։

Օրինակ, ես կրնամ բացատրել երաժշտութեան զարգացումը և գուշակել սինֆոնիայի վերջաւորութիւնը. բայց քաղաքականութեան մէջ չեմ կրնայ այս ընել, իրաւունք չունիմ այդ ընելու։ Այդ իմ գործածութեան շրջանակը չէ և իմ մասնագիտական խիղճը թոյլ չի տար ինձի զբաղուիլ անով, ին-

չին ինձի չեն պատրաստած մանկութենէն։ Հին ժամանակներուն անյաջողակ ստեղծագործողներուն հոտած ծուերով կը հարուածէին։ Քաղաքականութեան մէջ պարզ է բան մը, որ վատ է այն առաջնորդը, որը անյաջողակ ստեղծագործող է, որ մախօրօք չի տեսնար աղետալի վախճանը։ Կը նշանակէ, որ ինքը ծատրակի վարպետ չէ։ Ամենաշատը ինչ որ իրենց թուատրելի է բարեկամներու հետ «տամա» խաղալ։ Ամէն մէկը, եթէ իմանար իր հնարաւորութիւններու չափը, կրնայ ըլլալ որ, այսօր չ'ըլլային ժողովուրդի տառապանքները, որոնց համար համոզուած եմ, անոնք դեռ պիտի պատասխանեն պատմութեան առջեւ։

Մենք շատ բաներու վերապրած ենք. յոյս ունին, կը դիմանանք և այսօրուայ ծանր ժամանակներուն։ Քաղաքական խաղերը և տիրապետութեան հետաքրքրութիւնները միշտ եղած են, բայց մենք կը յաջողէինք կենդանի մնալ։

Չէ՞ որ մենք հայ ենք։

ՈՒՐԵՆ ՏԵՐՏԵՐՆԱՆ
«Արմենիա», Բուենոս Այրես
«Երաժշտական Հայաստան». Գիտահամարամատչելի
հոդվածների ժողովածու - եր.: «Ամրոց» հրատ.,
1998. էջ33-36

«ՃԱՆԱԳԵՆՔ ՄԻՄՅԱԼՆԵՐ»

ԵՊԿ 80-ականների սերնդի ներկայացուցիչներից՝ Գոհար Շագոյան



Նարինե Զարիֆյան, Գոհար Շագոյան, Սերգեյ Սմրադյան, Հակոբ Խալաթյան, Անահիտ Կոստանյան, Էդուարդ Չալոսյան, «Տերտերյան ֆեստ» փառատոնի համերգներից հետո, 2014 թ.



Իրինա Տիգրանովա, Հայկ Մելիքյան, Յովհաննես Մուրադյան, Վալենտին Թովմասյան, Դավիթ Ղազարյան, «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսին, «Ակունք» թուրքական 40-ում, հունվարի 28-ին, 2010 թ.

Սկզբը՝ «ԵՐԱԺԻՕՏ» 7-8 (175-176) 2020 համարում

Կարծում եմ, որ լավ կլինի ցանկացած մասնագետ որոշ կրթություն ստանա այլ երկրներում մույնպես, որպեսզի գնահատի իր գիտելիքները, ունակությունները՝ մույնիսկ բացահայտի իր տաղանդը, որպեսզի համեմատության մեջ պարզի իր իմացության չափը և արժևորի ամենատեղանքը՝ գործելակերպը սովորի:

Պետք է ասել, որ իմ ընտրած թեման շատ արդիական էր (ինչի համար միշտ երախտագիտությամբ եմ հիշում Ս. Թ. Մանուկյանին), ընդգրկում (շնորհիվ Ս. Եվ. Տարակաևովի), որ հետագայում ատենախոսությանս մի մասը դարձավ իմ երկրորդ թեման: Պատերազմի սերունդ դարձանք՝ Արցախյան ազատամարտի տարիներին, մեխանիկորեն ևս երկու տարով երկարացվեց իմ ժամկետները և 1996-ին Տարակաևովի մահից հետո տեղափոխեցին Ե. Բ. Դոլինսկայայի դասարան և հաստատելով երկրորդ թեման: Ու ես ստիպված երկրորդ դիսերտացիա գրելուն լծվեցի: Մոսկվայի կոնսերվատորիայի ռեկտորն այն ժամանակ մորանշանակ Ալեքսանդր Սոկոլովն էր: Նա այնքան խորին հարգանք ուներ պատերազմ անցած հայ ժողովրդի նկատմամբ, որ 2001-ին առանց ծանոթանալու կամ որևէ բացատրության դիմումս ստորագրեց և որպես պետական տեղ հաստատեց, ինչպես որ Ս. Եվ. Տարակաևովի ժամանակ էր:

Հրապարակված լրագրողական աշխատանքով Գոհար Շագոյանը 1994-ից արդեն աշխատում է ազգային ռադիոյում: Այդ տարիներին հետաքրքիր, յուրօրինակ և հեղինակային հաղորդումներ ու հաղորդաշարեր է պատրաստում, որոնք մեծ արժագանք են գտնում ռադիոլսողների շրջանում:

Շուրջ 5 հաղորդաշար պատրաստեց նա, որոնցից ամեն մեկն իր յուրօրինակությամբ ուներ, հետաքրքիր էր լսարանի համար և ուսանելի: Վերջին հաղորդաշարը տեղեկատվական էր՝ «Պրեստո» էր կոչվում և շատերի համար սիրելի էր դարձել, տեղեկ մեկ ու կես տարի, այնուհետև «Երաժիշտների գերդաստանը» և այլ նախագծեր:

Այն կոմպոզիտորների համար, որոնց հետ արդեն աշխատանքի բերումով էր ծանոթացել և շարունակում էր ծանոթանալ, շատ սիրելի և հոգեհարազատ եղան «Երաժշտական շաբաթներ»-ը, որ նվիրված էին մեկ կոմպոզիտորի գործունեությանը՝ Էդգար Յովհաննիսյանի, Ղազարոս Սարյանի, Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի, Վերջինը սակայն կիսատ մնաց՝ Ավետ Տերտերյանին էր նվիրված:

Հետո, Պարոն Յովհաննես Մուրադյանը, որ երաժշտական խմբագրության երկարամյա բաժնի վարիչն էր, բարձր գնահատելով Գոհար Շագոյանի աշխատանքը, ավստսանքով հաստատեց, որ նրանից առաջ և հետո էլ, ոչ մեկն այդպես էլ չչարունակեց այդ աշխատանքը, և որ նա միակ երաժշտագետն է, որ ստեղծեց ու իրենով էլ ավարտվեց այդ շաբաթները: Պատճառը մեծ ծավալի աշխատանքն էր երևի: Ինչ էր նշանակում երաժշտական շաբաթ: Մեկշաբաթյա բոլոր հաղորդումները և համերգները նվիրված էին դասական երաժշտությանը՝ հնչում էր մեկ կոմպոզիտորի երաժշտու-

թյուն, լուսաբանվում էր միայն նրա գործունեությունը և այդ ամբողջը պատրաստում: Դժվարին աշխատանք էր, սակայն դրա հետ միասին նրա համար շատ հոգեցունց էր, մինչև հիմա հիշում է Էդգար Յովհաննիսյանին նվիրված շաբաթը: Նա վատառողջ էր, ինչի պատճառով ցանկացած նրան ոգևորել, ուրախացնել, ինչն ստացվեց: Դա երկրորդ շաբաթն էր, իսկ առաջինը Ղազարոս Սարյանին էր նվիրված, նա էլ առողջական լուրջ խնդիր ուներ, այդ էլ կազմակերպեց նրան ոգևորելու համար: Պատկերացնել էր պետք և հասկանալ նրանց հոգեվիճակը, երբ այդ ծանր պահին ռադիոյով մեկ շաբաթ խոսում ու լսում էին իրենց մասին:

- Մեկ ստեղծագործության լսարան հաղորդաշարում երևան-երեբունի երգին էի նվիրել ամբողջ հաղորդումը: Պատրաստել ու ընդգրկել էի բոլոր կազմերի կատարումները, որ կար ռադիոյի ֆոնդում, մույնիսկ հայրենադարձների կատարմամբ՝ հատկապես ակորդեոնի նվագակցությամբ միաձայն հոգեցունց երգով և շատ գեղեցիկ նվագակցությամբ: Հենց այդ հաղորդումից հետո ինձ կանչեցին հեռախոսի մոտ, Աննա Ռուբենին էր՝ Էդգար Յովհաննիսյանի կինը: Շնորհակալություն հայտնեց ու զգուշացրեց, որ Էդգար Յովհաննիսյանը ցանկանում է ինձ հետ խոսել հեռախոսով:

Նա շատ հուզված էր, դանդաղ էր խոսում, սակայն շնորհակալություն հայտնեց իր գնահատմամբ՝ ճաշակիս ու մուրբ մոտեցումիս համար: Ես ևս հուզվեցի, որովհետև միառժամանակ առաջ հանդիպել էինք կոմսերվատորիայում, սակայն այդ քառս հյուծված չէր: Ի զարմանս ինձ, նա հիշեց, որ Մոսկվայում էլ էինք հանդիպել ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահին, կարծում էի մոռացած կլինի, բայց ոչ, պարզվեց մտավորականները երբեք ոչինչ և ոչ մեկին չեն մոռանում:

Հայկական Ռադիոն իրոք այդպիսին է իր մարդկային ջերմությամբ, հումորով,

մտավորականների բարձր վարկանիշով և կարծես «մինի» Հայաստան լինի իր բոլոր բնագավառներով ու շերտերով: Ռադիոյականներն այդպիսին են՝ անմիջական: Այդ տարիները շատ եռանդուն հաճելի բազմակողմանիորեն մասնագիտական հասունության և կայացման տարիներ էին ինձ համար՝ դասախոսական միջավայրից մինչև խմբագրական ասպարեզ: Իսկ «Երաժշտական Հայաստան» ամսագիրը շարունակեց՝ ինձ տանելով և խորացնելով խմբագրական ու գիտական ոլորտում:

Այնուհետև տիկին Շագոյանը շարունակելով միտքն ասաց.

- Գիտե՞ք ես ցանկանում եմ, որ Ձեր հոդվածաշարը լինի ոչ միայն իմ, այլ իմ ուսուցիչների ու ճանապարհիս հանդիպած անմոռաց անհատականությունների մասին, ովքեր հետք են թողել իմ զարգացման ու առաջընթացի գործում: Ես եկել եմ այն եզրակացության, որ մարդ անընդհատ սովորում է, անընդհատ ինքնազարգանում, եթե դա այդպես չէ, նա բարեկիրք մարդ և մտավորական չի կարող լինել: Իմ սիրելի ուսուցիչ՝ Մարգարիտ Բրուստյանի իմաստով պառկած ժամանակ էր, երբ ես սկսեցի հաճախ նրան այցելության

գնալ, ինձ պատգամներ էր տալիս ու ասում.
- Գոհարիկ ջան, եթե ես կարողացել եմ և կարողանամ փոխանցել այն ամենն ինչ ստացել եմ իմ ուսուցիչներից, իմ մեծերից, ամենաներջանիկ մարդը կլինեմ:
Ասացի, - Մարգր Սրամովնա այդքան լավ էին:

Պատասխանեց, - Այո: Եվ սկսեց պատմել ռեպրեսիաների տարիներից, երբ ինքը տասնուհին տարեկան էր: Այստեղ կարող եմ մեջբերել Աննա Բարսամյանին, նրա ծննդյան 100-ամյակի հանդիսության 3 օրերին, երբ ծնոքս բռնած իր կողքին էր նստեցնում: Իմ անմոռաց, ջերմ հումորով դասախոսը:

Ինձ 80-ականների սերունդն էմ համարում, կոնսերվատորիայի ամենածաղկուն կայացած տարիների ուսանողության մաս, որովհետև մեզ դասավանդում էին իրենց ստեղծագործական ծաղկուն շրջանն ապրող կոմպոզիտորներն ու երաժշտագետները, էլ չեմ ասում կատարողների մասին, որ մշտապես և ամենուր փայլում էին: Ամենահետաքրքիր վառ անհատականությունները մեր կողքին էին, մեզ հետ, և սիրով էին վերաբերվում մեր սերնդին, որովհետև մենք կոտրել էին շատ կարծրատիպեր: Մեր կոմպոզիտոր-ուսանողները գնում էին տարբեր դասախոսների մոտ, իրենց գործերն էին ցույց տալիս և դա արգելք չուներ: Մենք՝ երաժշտագետներս, գրում էինք ում մասին կամ ինչ ստեղծագործության մասին որ նախընտրում էինք, շատ ազնիվ ուղղամիտ արտահայտում էինք մեր մտքերը գիտաժողովներին, պատի թերթեր պատրաստում: Այդ պատճառով էլ մեզ ընդունում էին այնպիսին, ինչպիսին որ կանք:

Գալով ներկա ժամանակին, չեմ կարող լրագրողական և խմբագրական իմ գործառնություն չհիշատակել Իրինա Տիգրանովայի հետ մեր բարեկամությունը, որի առիթը նրա ծննդյան 60-ամյա հոբելյանն էր: Առաջին տարին էր, որ կյանքից հեռացել էր Ավետ Տերտերյանը: Ես սկսել էի երաժշտագետների մասին հոդվածներ գրել թերթերում, որը Արաքսի Սարյանը սրտանց ողջունեց և խորհուրդ տվեց հենց Ի. Գ. Տիգրանովայի մասին գրել: Ես պատասխանեցի, իսկ իրեն հոգեվիճակն այնպիսին է, որ կհամաձայնի: Սարյանն ասաց.

- Հենց դրա համար էլ անպայման, զանգահարի ու գնա: Այդպես էլ սկսվեց մեր բարեկամությունը, որը վերածվեց հարազատության:

Ցանկանում եմ հիշեցնել նաև, որ այս տարի հունիսի 28-ին լրացավ սիրելի պրոֆեսորիս՝ Աննա Բարսամյանի ծննդյան 105-ամյակը, ում «Երաժիշտների ազնվություն» են անվանել: Այնքան շատ հուշեր կան նրա հետ կապված, երբ նա գալիս էր հրատարակչություն՝ բոլորս ի նշան հարգանքի, մեծից փոքր հոտնկայս էինք դիմավորում, իսկ նա ասում էր. «Սա կոնսերվատորիայի ամենատաքուն անկյունն է»: Շուրջ շատ էր սիրում, մշտապես փոխադարձ հյուրասիրում էինք: Մի տեսակ կար, որ մեզ համար նա հատուկ էր բերում, որոնց վրա գրված էր՝ «**тличник**», «**ударник**», իր ծնոքով բաժանում էր և սկսվում էր հունձնում ու կատակները, փոխադարձ հուշերը (արտակարգ հիշողություն ուներ): Որքան կյանք ու եռանդ կար այդ սերնդի հոգում:

Այս տարի լրանում է նաև Ղազարոս Սարյանի ծննդյան 100-ամյակը, շատ հուշեր և տպավորություններ կան նրա հետ կապված, նրան էլ «Երաժիշտների խիղճ» էին անվանում: Ես շատ ապացույցներ կարող եմ բերել, որ դա այդպես էր: Տիգրանովա-Տերտերյանների, Սարյանների մասին առանձին հոդվածներ կարող եմ գրել, ուստի սահմանափակվեմք այսքանով: Իսկ ինչ դերակատարություն ունեն իմ պրոֆեսորներն ամսագրի ստեղծման, այնուհետև հրատարակչության գործընթացներում, կարծում եմ դրանց մասին հաջորդիվ՝ ըստ այն հիշարժան տարեթվերի, որ հիմանդրվել են:

Հիշողությունը սերունդների շարժիչ ուժն է ցանկացած բնագավառում՝ լինի երաժշտության, թե այլ, ինչի շնորհիվ պատմություն է կերտվում և յուրաքանչյուր նախորդ սերնդի կատարած գործ հիմնաքար է հանդիսանում հաջորդի համար: Եվ բնական է, որ յուրաքանչյուր սերունդ ազգին բերում է զարգացման իր ուրույն ձևերն ու մեթոդները, սա էլ ինքնին ակնկալում է հաջորդ սերնդի պայմանական կապը, որ զարգացման խթան է: Սակայն դրա բացակայությունը բացասականորեն կարող է ազդել ազգի առաջընթացին, ավելին՝ կարող է անջրպետ առաջացնել, իսկ դրան օգնության է գալիս կրկին հիշողությունը: Կարևոր է, և հարկավոր է հիշել Մեծերին, որովհետև, թե ինչ միջավայրում ես ապրում և մշակութային ինչ արժեքներով ես դաստիարակվում, այդչափ էլ մարդ ես ու անհատ:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Քանոնահարուհի, ժուռնալիստ,
խմբագիր

Ծովինար Չալոյանի դասախոսությունները

«Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

Սկիզբը նախորդ համարում

XII-XIV դդ. Կիլիկյան Հայաստանում նոր վերելք ապրեցին հայ գրականության ավանդույթները, զարգացան գրական ստեղծագործության նոր ձևեր, մուտք գործեց ժողովրդի խոսակցական լեզուն. գրաբարը մոտեցավ հանրությանը հասկանալի միջին հայերենին, շարունակեց զարգանալ ժողովրդական բանահյուսությունը, ստեղծվեցին գողտրիկ երգեր, զրույցներ, առակներ, հանելուկներ: Լիպարիտ զորավարի մասին պահպանված զրույցներում նկարագրված են նրա քաջագործությունները, որոնք ժողովուրդը համեմատել է Տրդատ Մեծի և Վարդան Մամիկոնյանի սխրագործությունների հետ: Հայոց կաթողիկոս Գրիգոր Պառավազյանը իր շարականներում, տաղերում երազում էր տեսնել հայությանը համախմբված հայրենի երկրում: Ձեռագրերում պահպանվել են Հետևանք վանքի միաբան Գրիգոր Մարաշեցու (XII) արձակ բանաստեղծությունները՝ («Ողբ», «Աղոթք»)՝ գրված Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ոգով:

Կիլիկիայի արձակագիրներից էր Վարդան Այգեկցին (XII-XIII): Նրա հարուստ ժառանգության մեջ կարևոր տեղ ունեն բարոյագրող և առակներ, որոնք հայ միջնադարյան գրականության խոշոր նվաճումներից են: Առակների բովանդակությունը հասարակական կյանքն է, խոցելի բարքերի սուր քննադատությունը:

Կիլիկիայի Հեթում I թագավորը, որպես գրասեր, ոչ միայն հովանավորել է դպրության և ձեռագրային մշակույթի զարգացումը, այլև անձամբ ստեղծել մատենագրական արժեքներ, հեղինակ է մի շարք բանաստեղծությունների:

Կիլիկիայի Լևոն III թագավորը գրել է տաղ Նվիրված Տաթևի վանքին: Նրա դուստրը եղել է հռչակավոր գեղագրուհի, ստեղծել է տառատեսակներ, նրբարվեստ գրչություն:

Կիլիկյան Հայաստանում ծաղկել է նաև թատրոնը: Այն եղել է քաղաքային միջավայրի զարգացման արդյունք, միջնադարյան աշխարհիկ կյանքի տարատեսակ ձևերի գեղարվեստական արտահայտություն (կրկեսային, պարային, խոսքային, երգային, երաժշտական): Կառուցվել են ժամանակակից կրկեսներին նմանվող թատերական շենքեր: Սպասարկման կառույցներից պարտադիր էր բաղնիքը, ուր լոգարանի հատակը երեսպատվում էր հիմնականում շքեղ, խճանկարագրող սալիկներով քաղաքատիպ բնակավայրերը հայտնի էին իրենց շքեղությամբ և գեղեցկությամբ: Ամեն մի ամրոցում կամ դղյակում կար եկեղեցի, իսկ քաղաքներում՝ մի քանիսը (Սիսում 20-ից ավելի):

Սիսի Ս. Առֆիայի տաճարը (XIII) եղել է 1292-1441թթ. Ամենայն Հայոց Մայր տաճարը, այնուհետև մինչև 1921-ը՝ Կաթողիկոսության Մեծի Տանն Կիլիկիո աթոռանիստը:

Գաղթելով մայր Հայաստանի տարբեր շրջաններից՝ հայերը իրենց հետ Կիլիկիա են բերել հայ երաժշտության X- XI դարերին հատուկ ժողովրդական և գուսանական երգ ու

նվագ, հոգևոր երգարվեստ: Ամիի անկումից հետո սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների ավերածությունների պայմաններում փրկվել էին միայն մշակութային առանձին օջախներ: Կիլիկիայում գրեթե հաջողվեց իրագործել հայ հոգևոր մասնագիտացված երաժշտությունը՝ որպես պատմական բազմադարյա զարգացման արդյունք: Կիլիկյան Հայաստանի պետականության պայմաններում զարգացած ֆեոդալիզմի չափանիշներով իրենց ավարտուն տեսք են ստացել Ավետարանը, Շարակնոցը, Գանձարանն ու Մանրուսան գիրքը, ճաշոցը, Մաշտոցը, Տոնացույցը, ճառընտիրը և ժամագիրքը: Ջարգացման գլխավոր ազդակը եղել է քաղաքային կյանքի և մշակույթի անախատեց ծաղկումը:

Նշենք, որ Հայաստանի տարածքում՝ ներքին և արտաքին դժվարությունների ծանր պայմաններում, մշակութային կենտրոնները, օգտվելով Կիլիկիայում ձեռք բերած նվաճումներից, դիմակայել են լճացմանը և մեկուսացմանը: Այդ շրջանի մի շարք երաժիշտ բանաստեղծներ՝ Վարդան Արևելցին և Հովհաննես Երզնկացի Պուլզը, իրենց ամբողջ գործունեությամբ օժանդակել են Կիլիկյան Հայաստանի մշակութային կապերի խորացմանը: Անգամ ուշ միջնադարի (մինչև XIX դ.) հայ գրիչները, երգիչները օգտվել են կիլիկյան ծիսական մատյաններից՝ փորձելով միաձուլել կիլիկյան և հայաստանյան երաժշտության լավագույն ավանդույթները:

XIII դարում Հայաստանը ենթարկվում է թաթար-մոնղոլների ավերիչ հարձակումներին: Եվ հակառակ պատմության տրամաբանությանը այդ ժամանակաշրջանում բացվում են Գլաձորի և Տաթևի համալսարանները, որտեղ դասավանդում էին ոչ միայն աստվածաբանություն, այլև փիլիսոփայություն, գեղանկարչություն, երաժշտություն, մաթեմատիկա, բժշկություն, տիեզերագիտություն, մանկավարժություն, հռետորություն: Տաթևի համալսարանում դասավանդում էին նաև մարդու անատոմիա: Եվրոպայի եկեղեցականները դեռ պահպանում էին նման հետաքրքրությունները: Հիշենք Միքելանջելոյի, Լեոնարդո դա Վինչիի գաղտնի դիախերծումները՝ մարդկային մարմնի անատոմիային ծանոթանալու նպատակով: Երևանի Մատենադարանի ձեռագրերում կան միջնադարյան անատոմիական գծանկարներ:

Հայաստանում XIII դարում մեծ թափով լայնածավալ ընթացք է ստանում Հռոմի և Հայաստանի եկեղեցիների միավորման ծրագիրը: Կողմնակիցներին կոչում էին ունիտորներ (*unita* - «միացում»): Հռոմի պապի ներկայացուցիչը Հայաստանում Բարդուղիմեոսն էր, որը թուլմա Աբվինացու աշակերտն էր և պատկանում էր դոմինիկյանների միաբանությանը: Հայաստանում Հովհաննես Կոնցեցին, ստանալով Հռոմի պապի օրհնամբը, Աբվինացու «Աստվածաբանության հանրագումարը» (*«Summa theologiae»*) թարգմանեց հայերեն և փորձեց Հռոմի կաթոլիկ կրոնը ընդունելի դարձնել Հայաստանում: Սակայն հանդիպեց մեծ դիմադրության. ի դեմս Հովհան Որոտնեցու և Տաթևի համալսարանականների:

Տաթևի համալսարանը վերակենդանացրեց Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգությունը: Այդ համալսարանի հիմնադիրը Հովհան Որոտնեցին էր (1315-1388)՝ հայկական նոմինալիզմի ներկայացուցիչը, Անհաղթի և Արիստոտելի փիլիսոփայության մեկնաբանը: Արվեստում նա տարբերում էր ձև և կերպ (բովանդակություն) հասկացությունները: Ձևը ստեղծագործության ավարտուն, արտաքին կողմն է և տարբերվում է կերպից, սակայն վերջինը բարդ է, նա արվեստի էությունն է: Ինքը՝ արվեստը, բնության կրկնօրինակումն է. գրում է Որոտնեցին, բայց զգուշացնում է ստեղծագործողին՝ *«Եթե կտավը նման է բնագրին, դա դեռ չի նշանակում, որ նրանք նույնն են, քանի որ մի բան է նկարը, մի այլ բան՝ բնագիրը»* (տես Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր N3207, էջ 116ա): Նման մոտեցումը հնարավոր է դարձնում ստեղծագործողի անհատականության դրսևորումը:

Որոտնեցու մահից հետո Տաթևի համալսարանը ղեկավարեց նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346 1406): Նա երևելի Փիլիսոփա էր, մանկավարժ, կրոնական գործիչ, միջնադարյան նոմինալիզմի խոշոր ներկայացուցիչ: Բազմակողմանի գիտելիքները նրան հնարավորություն տվեցին ստեղծելու Տաթևի համալսարանին կից մանրանկարիչների և երաժիշտների դպրոց: Գեղագիտության հիմնահարցերից նա մեկնաբանում է գեղեցիկը՝ աշխարհիկը և երկնայինը, աստվածայինը: Առաջնություն տալով երկրորդին՝ նա փորձում է համոզել, որ աշխարհիկ գեղեցիկը, կրելով փոփոխություններ, չի կարող լինել կատարյալ, քանի որ կատարյալ գեղեցիկի միակ հնարավորությունը աստվածային որակն է: Միևնույն ժամանակ նա մեկնաբանում է արվեստի հիմնահարցերը՝ հենվելով ռացիոնալիստական էմպիրիզմի վրա: Օրինակ՝ *«Յուրաքանչյուր ստեղծագործություն ձևավորվում է մտքում, հետո պատկերացվում է տեսողությանը և վերջում՝ ստեղծվում ձեռքերով»*, կարդում ենք Տաթևացու գործում: Նա առաջարկում է մեծ տեղ տալ երևակայությանը, «անգամ ստեղծագործելիս ճամփորդել երևակայությանը», որը հնարավորություն կտա կապելու գեղարվեստական միտքը ստեղծագործական գործընթացին, այսինքն՝ ռացիոնալիզմը հանդես գա սենսուալիզմի հետ: Նա գրում է. *«Ձևն անմարմին է մտքում»* (Գրիգոր Տաթևացու Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 23):

1729 թ. Կոստանդնուպոլիսում հրատարակվեց Տաթևացու «Գիրք հարցմանը», որում գեղեցիկը, որպես աստվածաբանական կատեգորիա, հանդես է գալիս երեք որակով՝ ձևի համաչափությամբ, մասերի ներդաշնակությամբ և աստվածային փայլով: Հուտով Տաթևի դպրոցն ամփոփում էր մտածելակերպից կանցնի մատերիալիզմին և տրամաբանությանը:

շարունակելի

ԾՈՎԻՆԱՐ ԳՎԼՈՅԱԼԻ
Գեղագիտության պատմություն գրքից,
Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ

ԱՆԱՀԻՏ ՑԻՑԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ՎՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ

9 արպտուն միտք ունեցող մասնագետը դժվարությամբ էր մնում տան չորս պատերում:

Ցավոք, շատ շուտ ավարտեց իր գործունեությունը՝ մահացավ ընդամենը 72 տարեկանում, երբ դեռ շատ բան ուներ անելու:

Ցիցիկյանը եզակի է իր մասնագիտական տեսակով, ես չեմ հանդիպել նման մակարդակի գիտնականի՝ լարային գործիքների մասնագիտացմամբ: Կոնսերվատորիայում նա առաջինը սկսեց կարդալ Լարայինների կատարողական արվեստի պատմություն առարկան, հիմնվելով այս ասպարեզում միջազգային փորձի վրա, և հետագայում իր գիծը շարունակող Լուիզա Մաթևոսյանը, այսօր արդեն Աիդա Նալբանդյանը հիմք են ընդունել իրենց լեկցիոն կուրսերի համար հենց Ցիցիկյանի դասախոսությունները: Բոլորովին գրոյից նա ստեղծեց Հայ լարային կատարողական արվեստ առարկայի կուրսը, վարում էր նաև Լարայինների պրակտիկա առարկան: Բացահայտել է բազմաթիվ հայտնի կատարողների անուններ, զննել ամեն մի աննշան թվացող փաստի ետևից՝ վերաստեղծելով հայ լարային արվեստի տակավին չուսումնասիրված պատմությունը: Իհարկե, այսպիսի վարպետը ոգեշնչել է բազմաթիվ հայ կոմպոզիտորների, որոնք առաջին կատարող Ցիցիկյանին են նվիրել իրենց ստեղծագործությունները, հաշվի առնելով իր կարծիքը այս կամ այն հնարքի, տեխնիկական կամ այլ խնդրի լուծման հարցում:



Երեկոյի հյուրեր

Իսկ թե ինչպիսի շրջապատ է ունեցել Ցիցիկյանը՝ մեծագույն հայ և ալյազգի անուններ. Եհուդի Մեմուհին, Յոնեֆ Սիգետի, Դավիթ Օյստրախ, Ավետ Գաբրիելյան, Արամ Խաչատրյան, Օհան Դուրյան, Ռոբերտ Անդրեասյան, Վազգեն Առաջին, Կոնստանտին Սարաջյան, Մաքսիմ Հոստակովիչ, Սուրեն Քոչարյան, Լուսինե Ջաքարյան, Գոհար Գասպարյան, Էդվարդ Միրզոյան, Առնո Բաբաջանյան, Էդուարդ Բադ-դասարյան:

- Սիրելի Անահիտ, - գրում է Յոնեֆ կամ Յոնկա Սիգետին, - որքան սիրալիր քայլ էր Ձեր կողմից ուղարկել ինձ Ձեր ծայնագրությունը, որը լսեցի մեծագույն հաճությամբ, ըմբռնվելով Ձեր գունագեղ, ռիթմիկ և այդքան հիասքանչ



Ժամնա Բադրամյան, Լիլիթ Եփրեմյան, Նունե Բադալյան, Նունե Շամախյան, Մարիա Մավիսակյան

կատարումը: Ստեղծագործությունը ինձ նույնպես շատ հետաքրքրեց: Կարծում եմ, Դուք պետք է առաջարկեք «Մելոդիա» ֆիրմայի ներկայացուցիչներին առավել ջանքեր գործադրել զովագրելու այս ծայնագրությունը, որպեսզի դրա արձագանքները հայտնվեն անգլիական և ամերիկյան մամուլում: [...]

Սրտագին Ձեր՝ Յոնկա:

ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ
ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



Աննա Առաքելյան, Մեգի Սարգսյան, Կոնցերտմայստեր՝ Նունե Մելիք-Վրթանյան, Արման Առաքելյան, Արմավիրի արվեստի պետական քոլեջի տնօրեն, ԵՊԿ ղեկավար՝ Նունե Մուրադյան, Մանե Բարեղամյան, Քրիստինա Տոնոյան

❖ Հունիսի 28-ին, Արմավիրի արվեստի պետական քոլեջում տեղի ունեցավ վոկալ երաժշտության համերգ՝ նվիրված քոլեջի 30-ամյա հոբելյանին:

Ելույթ ունեցան ԵՊԿ ակադեմիական երգեցողության բաժնի ուսանողները:

Ծրագրում ընդգրկված էին արևմտաեվրոպական, ռուս և հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ղեկավար՝ ԵՊԿ ակադեմիական երգեցողության ամբիոնի դասախոս, ղեկնւտ, ԱԱՊՔ տնօրեն Նունե Մուրադյան, նվագակցող՝ Նունե Մելիք-Վրթանյան:

❖ Հունիսի 29-ին ԵՊԿ ակադեմիական լաբորատորիայում տեղի ունեցավ ԵՊԿ ջազ-փոփ երաժշտության ամբիոնի դասախոս, ՀՀ վաստակավոր արտիստ, ղեկնւտ Էմմա Պետրոսյանի դասարանական համերգ՝ նվիրված ԵՊԿ 100-ամյակին: Մասնակցում էին Յանա Գրիգորյանը, Մանե Յորդեգյանը, Էրիկ Անտոնյանը, Տարոն Մուրադյանը, Մարկ Հայրապետյանը, Արթուր Միքայելյանը, Մելենա Էլիասյանը, Վրեժ Հակոբյանը, Հրաչյա Խաչատրյանը, Գոհար Վարդանյանը, Հրաչյա Խաչատրյանը: Ծրագրում ընդգրկված էին հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, ջազային ստանդարտներ, համաշխարհային հի-

թեր: Նվագակցում էր Սոֆի Միքայելյանը:



ԵՊԿ ջազ-փոփ երաժշտության ամբիոնի ղեկնւտ Էմմա Պետրոսյանի դասարանական համերգը

❖ Հունիսի 15-ին, ԵՊԿ ակադեմիական լաբորատորիայում կայացավ Ք. Վ. Գյուլիկի «Օրփեոս եվ Էվրիդիկե» օպերայի հայաստանյան բեմելին նվիրված մամլո ասուլիսը, որի ընթացքում խոսեցին ԵՊԿ Ղ. Սարյանի անվ. օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար Հասմիկ Պապյանը, ՀԱՖՆ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թովմյանը, դիրիժոր Սուրեն Շահիջանյանը, ռեժիսոր Վահան Կարապետյանը, նկարիչ Տիգրան Զիրոցյանը: Ներկայացումները տեղի ունեցան հուլիսի 16-ին, 17-ին, 19-ին և 20-ին, ԵՊԿ Ղ. Սարյանի անվ. օպերային ստուդիայի դահլիճում: Տիգրան Քախվելյանը (Օրփեոս), Լիլիթ Դավթյանը (Էվրիդիկե), Սիրանուշ Օսկանյանը (Ամոնե): Դիրիժոր՝ ՀԱՖՆ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թովմյան:



Վահան Կարապետյան, Տիգրան Զիրոցյան, Հասմիկ Պապյան

❖ «Հովեր» պետական կաներային երգչախումբն արժանացել է «Խաղաղություն աշխարհին» երգչախմբային փառատոնի (World Peace Choral Festival 2021)-ի Gold Award-ին («Ոսկե մրցանակ»): Երգչախմբի հիմնադիր, խմբավար Սոմա Հովհաննիսյանին շնորհվել է Excellent Choir Conductor մրցանակը:



Хоровая лаборатория XXI век



С 25 июня по 3 июля в Гатчине проходила летняя школа «Хоровая лаборатория XXI век». Ее участниками стали хормейстеры, композиторы и концертмейстеры из разных стран мира. Своими впечатлениями делится участник лаборатории – доцент Ереванской государственной консерватории имени Комитаса, лауреат международных, всероссийских, республиканских конкурсов композиторов и исполнителей София Микаелян: «Лет-

няя школа композиторов, концертмейстеров и хормейстеров» – прекрасная возможность повышения квалификации, знакомство с новыми хоровыми композиторами, исполнителями, коллективами, живое общение с преподавателями Летней школы. Из-за сложившейся обстановки, некоторые встречи проходили в онлайн-режиме.

С композиторами работали известные мастера: Амброш Чопи из Словении, Мия Макарофф из Финляндии. Они проводили индивидуальные занятия и встречи в онлайн формате. Единственный из композиторов, профессор из Гнесинки – Алексей Львович Ларин, приехал из Москвы и провел с композиторами как индивидуальные занятия, так и открытые встречи.

Композиторы в школе создавали произведения, которые прямо из под пера учили Детский и Молодежный хоры.

Прекрасный молодой, талантливый дирижер Евгений Иванов, справился с нашими непростыми хоровыми партитурами с легкостью и творческим вдохновением, представив на суд слушателей и свою оригинальную композицию!».

<https://xn--b1acdcnmzeczybaclm7r.xn--p1ai/%b2-%d0%b3%d0>

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



В 2021 году в московском издательстве АСТ вышла книга Арно Бабаджаня Верни мне музыку (воспоминания современников). Издание осуществлено при содействии Фонда развития и поддержки русско-армянских гуманитарных инициатив «Наследие и Прогресс».

Арно Бабаджаня (1921–1983) – композитор, любая песня которого становилась настоящим хитом. «Лучший город земли», «Свадьба», «Королева красоты», «Чертовое колесо», «Верни мне музыку» – песни, хорошо известные в исполнении М.Магомаева, И. Кобзона, В. Толкуновой, А. Герман, Э. Пехи. Из воспоминаний родных, друзей и коллег А. Бабаджаня, среди которых А. Хачатурян, А. Арутюнян, Э. Мирзоян, А.Пахмутова, Н. Добронравов, Т. Гвердцители, Л. Долина, читатель узнает о жизни и творчестве замечательного композитора. В книге можно услышать голос и самого Арно Арутюновича – его размышления о жизни и музыке никого не оставят равнодушным. В первой главе книги «Сила таланта» приводятся воспоминания современников: сына композитора, президента Фонда памяти Арно Бабаджаня Ара Бабаджаня; генерального продюсера Фонда памяти Арно Бабаджаня Армена Саркисянца; композитора, Народного артиста СССР Арама Хачатуряна; композитора, Народного артиста СССР

Александра Арутюняна; композитора, Народного артиста СССР Эдварда Мирзояна; дирижера, народного артиста Арм.ССР Константина Сараджева; заслуженного деятеля искусств РА, проф. ЕГК Аракси Сарьян; композиторов Мелика Мависакаляна, Александры Пахмутовой, Кирилла Молчанова; поэтов-песенников Анатолия Горохова, Роберта Рождественского; Народного артиста СССР Иосифа Кобзона; певиц Ларисы Долиной, Тамары Гвердцители; академика Международной академии телевидения и радио Дианы Берлин; Народного артиста СССР Армена Джигарханяна; пианиста, проф. Юрия Розума; сопредседателя совета попечителей Фонда памяти Арно Бабаджаня Алексея Шапошникова; главного военного дирижера Вооруженных сил РФ Тимофея Маякина; начальника Центрального военного оркестра Минобороны РФ Сергея Дурыгина; генерального директора Российской национальной музыкальной библиотеки Михаила Брызгалова; хореографа Мариинского театра Юрия Смекалова; музыкального продюсера Араксии Мушегян; художника Асмик Чахмахчян; представитель Фонда памяти Арно Бабаджаня в Северной Америке Нуне Меликян; пианистка Араксия Айрапетян; историк искусств, вице-президент Фонда памяти Арно Бабаджаня Артем Андреасян.

Во второй главе «Песня – отражение времени» приводятся статьи А.Бабаджаня: Музыка как путь жизни, Песня – отражение времени, Окрыленность классикой, Впереди долгие дороги.

Книга вышла в серии «Большая биография».

СОФА АЗНАУРЯН

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆԵՎՏՐԱԶԻ ՎԱՅՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03U059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտայի անվ. ԵՊԿ ՊՈԼՎ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՅԱՆ, ԳՈՐԴՐ ՀԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ

Թղթարկման պատասխանատու՝ ԳՈՐԴՐ ՀԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԳՈՐԴՐ ՀԱԳՈՅԱՆ

ՍՈՖԱ ԱՅՆԱՐԻՅԱՆ (ՌՈՍ. ԵՎՈՒ)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԴՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 26.08.2021: Գինը 400 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՋԼՍ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
<http://www.conservatory.am>,
E-mail: yerazhisht@gmail.com
<https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

